

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ՀՐԱԴԻՐՈՒԱԾ Է ԹՈՒՐՔԻԱ

Թրքական «Չաման» թերթը կը տեղեկացնէ, որ Մայիսի 8-13-ը իսթանպուլի մէջ կայանալիք ՄԱԿ-ի համաժողովին մասնակցելու համար հրաւիրուած է նաեւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանին:

Դեսպան Միթաթ Ռենդէ, մամուլոյ ասուլիսի մը ընթացքին յայտնելով այս մասին, աւելցուցած է, որ ո՛չ Հայաստանի, ո՛չ Ատրպէյճանի նախագահները տակաւին չեն հաստատած իրենց մասնակցութիւնը համաժողովին:

Հրաւերները ՄԱԿ-ի վարչակազմին կողմէ ուղարկուած են կազմակերպութեան անդամ երկիրներու ներկայացուցչութիւններուն:

Հայաստանի նախագահի մամուլի քարտուղար Արմէն Արզումանեան այս կապակցութեամբ NEWS.am-ի հարցին պատասխանելով ըսած է, - «Եթէ Դուք նկատի ունէք ՄԱԿ-ի առաւել թոյլ զարգացած երկրների չորրորդ համաժողովը, ապա մի քանի տասնեակ երկրներ ղեկավարները շարքում ՀՀ նախագահը նոյնպէս հրաւիրուածների կազմում է, եւ ՄԱԿ-ի համապատասխան ծառայութիւնների հետ մասնակցութեան հարցը քննարկում է աշխատանքային կարգով»:

Արզումանեան սակայն աւելցուցած է որ, Թուրքիոյ իշխանութիւններուն հետ երկկողմ հանդիպումներ յառաջիկային չեն նախատեսուած:

Թրքական թերթին համաձայն, համաժողովին պիտի մասնակցին 50-60 երկիրներու առաջնորդներ եւ կառավարութեան ղեկավարներ, ինչպէս նաեւ մօտ 100 նախարար:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ Կ'ԱՐՁԱՆԱԳՐԷ՝ «ՍԱՀՄԱՆԱՓՈՎՈՒԹՅՈՒՆ Ե ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԻՋՈՑԱԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ»

Միացեալ Նահանգներու Պետական Գրասենեակը հրատարակած է «Մարդու իրաւունքներ - 2010» տարեկան զեկոյցը: Զեկոյցը կը վերլուծէ աշխարհի 190 երկիրներու մէջ մարդու իրաւունքներու վիճակը անցեալ տարուան ընթացքին:

Զեկոյցին հեղինակները կ'արձանագրեն որ, 2010 տարին ամփոփող փաստաթուղթը կը հրատարակեն 2011-ի երեք ամիսները բոլորելէ ետք, երբ մեծ իրադարձութիւններ կը ցնցեն Միջին Արեւելքը:

«Այս պահուն մենք չենք կրնար կանխատեսել այդ փոփոխութիւններու արդիւնքը եւ չենք կրնար իմանալ նաեւ անոնց արդիւնքները՝ յետագայ տարիներու կտրուած քով, այնպէս որ, ամբողջ տարածաշրջանի համընդգրկուն վերլուծութիւն կատարելը պատեհ չէ»,- կը գրեն անոնք՝ յիշատակելով Թունուսի եւ Եգիպտոսի ժողովուրդներուն կողմէ ժողովրդավարական հասարակութիւններ կառուցելու պոթիւնները:

Հայաստանի մասով զեկոյցը բաղկացած է 63 էջերէ, որոնք մասնաւորապէս կը նկարագրեն մարդու իրաւունքներու վիճակը անցեալ տարուան ընթացքին:

Կ'արձանագրուի, որ Հայաստանի մէջ սահմանափակուած է քաղաքացիներու խաղաղ ընտրութիւններու միջոցով իշխանութիւնը փոխելու իրաւունքը, քանի որ ընտրութիւնները պարբերաբար կ'անցնին կոպիտ խախտումներով, ինչպէս՝ Յունուարին Ազգային ժողովի պատգամաւորի համար ընտրութիւնը: Իրենց քաղաքացիական ղեկավարներուն ուղղորդութեամբ՝



անվտանգութեան ուժերու որոշ ներկայացուցիչներ կը շարունակեն ոտնահարել մարդու իրաւունքները՝ մնալով անպատիժ:

Անցեալ տարի Հայաստանի զինուած ուժերուն մէջ՝ ռազմական գործողութիւններու բացակայութեան պայմաններուն տակ՝ արձանագրուած են մահուան դէպքեր:

Զեկոյցը կը շեշտէ, որ 2010-ին իշխանութիւնները ազատ արձակած են Մարտ 1, 2008-ի գործով ազատագրուած չորս անձ: Նոյն դէպքերուն հետ կապուած երկու հոգի ալ ազատ արձակուած է ամբողջ պատիժը կրելէն ետք:

Լրատուամիջոցները, յատկա-

պէս՝ հեռուստատեսութիւնը, շարունակելով նախկինի պէս, չեն ապահոված կարծիքներու բազմազանութիւնն ու իրաւական լրատուութիւնը: Լրատուամիջոցներու նկատմամբ եղած են հետապնդումներ եւ գրաքննութիւնը շարունակուած է:

Իշխանութիւնները շարունակած են մերժել ընդդիմադիր կուսակցութիւններու եւ այլ խումբերու՝ որոշակի վայրերու մէջ հաւաքներ իրականացնելու պահանջները, երբեմն առաջարկելով այլ վայրեր, երբեմն՝ խոչընդոտելով մարդոց մաս-

Շարք էջ 4

Ս.Դ.Հ.Կ. «ԿԱՅԾ» ՄԻՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ՆՈՒԻՐՈՒԹՅՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐՈՒ ԵՐԵԿՈՆ



Շաբաթ 9 Ապրիլի երեկոյան, 2011 Փաստինայի Հ.Մ.Մ. «Կարօ Սողանյան սրահ փոխացած էին մեծ թիւով երիտասարդներ, Ս.Դ.Հ.Կ. տարբեր միաւորներու ներկայացուցիչներ եւ համակիրներ, նշելու «Կայծ» երիտասարդական Միութեան հիմնադրութեան 100-ամեակը:

Ներկաներուն մէջ կը նշմարուէին Ս.Դ.Հ.Կ.ի Կեդրոնական վարչութեան անդամ ընկ. Տօթթ. Համբէիկ Սարաֆեան, շրջանի վարիչ Մարմնի ատենապետ Տէր եւ Տիկ. ընկ. Վազգէն Խոտանեան եւ այլ հրաւիրեալներ, որոնք եկած էին Միութեան անդամներուն եւ զազափարական ընտանիքին հետ

նշելու Մայր Կուսակցութեան ծոցէն ծնած «Կայծ» երիտասարդացի 100-ամեակը:

Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի վարիչ Մարմնի անդամ եւ երիտասարդական Դիւանի պատասխանատու Ընկ. Միհրան Խաչատուրեան կազմակերպիչ մարմնի անունով ողջունեց ներկայ հասարակութիւնը, որ եկած էր անգամ մը եւս հաղորդուելու մեր փառապանծ կուսակցութեան սիրագործութեանց եւ ազգանուէր ծառայութեանց հետ:

Յաջորդաբար ելոյթներ ունեցան «Կայծ»ի պատասխանատու-

Շարք էջ 18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ ՎԱԵՐԱՑՈՒՑ ՌՈՒՄԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՅԱՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի Ազգային ժողովը Ապրիլ 12-ի իր նիստին 80 կողմ, մէկ դէմ եւ մէկ ձեռնպահ ձայներով վաւերացուց Օգոստոս 20, 2010-ին Երեւանի մէջ Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ ստորագրուած պայմանագրին մէջ փոփոխութիւններ կատարելու մասին թիւ հինգ արձանագրութիւնը:

16 Մարտ 1995-ին ստորագրուած պայմանագրին մէջ անցեալ տարի կատարուած փոփոխութիւններով կը սահմանուի, որ Հայաստանի Հանրապետութեան տարածքին գտնուելու ընթացքին ռուսական ռազմակայանը՝ բացի Ռուսաստանի Դաշնութեան շահերու պաշտպանութեան գործառնութիւնէն, ՀՀ գինուած ուժերու հետ համատեղ կ'ապահովէ Հայաստանի Հանրապետութեան անվտանգութիւնը:

Արձանագրութեամբ նաեւ կը նախատեսուի, որ Հայաստանի անվտանգութեան ապահովման համար

Ռուսաստան պէտք է Հայաստանը ապահովէ ժամանակակից եւ համատեղելի սպառազինութեամբ ու ռազմական սարքերով: Արձանագրութեան այլ փոփոխութեամբ կը նախատեսուի երկարաձգել Հայաստանի մէջ գործող ռուսական ռազմակայաններու գործունէութեան ժամկէտը՝ 25 տարիէն բարձրացնելով 49 տարի:

Օր մը առաջ, Ազգային ժողովէն ներս Արձանագրութիւնը ներկայացնելով, Հայաստանի պաշտպանութեան նախարարի տեղակալ Արա Նազարեան յայտնած էր Ռուսաստանի Դաշնութեան ուժերու կողմէ ՀՀ տարածքի անվտանգութիւնը ապահովելու լուրը: Ան ընդգծած էր, որ նախկին ձեւակերպումը կ'ենթադրէր Ռուսաստանի կողմէ Հայաստանի միայն նախկին ԽՍՀՄ-ի արտաքին սահմաններու երկայնքով սահմաններու պաշտպանութեան համար:

Շարք էջ 4

ԿՈՆԳՐԵՍՆ ՈՒ «ԵՐՐՈՐԴ ՈՒԺ» ԵՐԸ

ՅԱԿՈՐԲԱՌԱՆԵԱՆ

Հայ ազգային կոնգրեսի առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանն Ապրիլի 8-ի հանրահաւաքային իր ելոյթում ծաւալուն անդրադարձ կատարեց այսպէս կոչուած «երրորդ ուժի» հանգամանքին: Այդ մասին նոր չէ, որ խօսուում է: Այդ խօսակցութիւնները, տարբեր ուժգնութեամբ, ներքաղաքական շրջանառութեան մէջ յայտնուում են արդէն մօտ երկու տարի: Եթէ Տէր-Պետրոսեանը Ապրիլի 8-ի հանրահաւաքում ծաւալուն անդրադարձ է կատարում դրան, ուրեմն ներկայ պահին այդ հանգամանքը համարում է իր գլխաւորած Կոնգրեսի բաւական լուրջ մարտահրաւեր: Տէր-Պետրոսեանը յայտարարում է, որ «երրորդ ուժը» անհանգստացած է Կոնգրեսի եւ իշխանութեան հնարաւոր երկխօսութեան կայացմամբ, որի հետեւանքը, ըստ Տէր-Պետրոսեանի, կարող է լինել արտահերթ ընտրութիւնը: Բայց, կարծես ակնյայտ է, որ Տէր-Պետրոսեանն էլ անհանգստացած է «երրորդ ուժի» հնարաւոր գեներացիայից:

Ինչ կարող է տեղի ունենալ այդ դէպքում: Այդ դէպքում իշխանութիւնը կարող է ստիպուած

կարող են լինել մարդիկ, ովքեր կ'ունենան անհամաձայնութիւններ Կոնգրեսի մարտավարութեան կամ բովանդակային կողմի հետ, եւ կարող են փորձել ինքնուրոյն նախաձեռնութիւններով հանդէս գալ: Արդեօք չի կարող լինել այսպէս ասած ազնիւ եւ անկեղծ «երրորդ ուժ», որը չի ծառայում ինչ որ ստուերային ուժերի, Կոնգրեսի դէմ խարդաւանքների եւ ինտրիգների: Իհարկէ, կասկած չկայ, որ «երրորդ ուժի» պրոցէսի մասին դատողութիւններ անողների մի զգալի մասի բուն ինդիքը ընդամենը Կոնգրեսի «անիւները» ծակելն է, այն էլ ոչ թէ երկրում իրավիճակի փոփոխութեան գործընթացի արդիւնաւէտութիւնն աւելացնելու, այլ պարզապէս անձնական կամ խմբակային ինչ որ շահ սպասարկելու նկատուածով: Բայց, արդեօք Կոնգրեսի եւ նրա առաջնորդի համար այդպիսին են Կոնգրեսի եւ նրա առաջնորդի հանդէպ բոլոր «անհամաձայնները»: Որեւէ քննադատութեան, անհամաձայնութեան, կամ Կոնգրեսի մարտավարութեան, հաշուարկների եւ տրամաբանութեան շրջանակից դուրս ցանկացած «ինքնագործունէութեան» հանդէպ Կոնգրեսի եւ նրա ակտիւ վերա-

Պարզ է դառնում, որ Կոնգրեսի համար «երրորդ ուժի» հեռանկարը իսկապէս անհանգստացնող է եւ դրա դէմ պետք է պայքարել

լինել հաշուի նստել այդ երրորդ ուժի հետ եւ նրան էլ ինչ որ պայմաններ կամ կանոններ առաջարկել, ինչը հաւանաբար առաջարկում է Կոնգրեսին: Կամ, կարող է ընդունել պայմանների եւ կանոնների առաջարկներ այդ «երրորդ ուժից», ինչպէս հաւանաբար ներկայում պայմանների կամ կանոնների առաջարկներ է ընդունում Կոնգրեսից: Այսինքն, իշխանութիւնը կարող է կիսել ընդդիմութեան խորհրդարանական «քվոտան» Կոնգրեսի եւ «երրորդ ուժի» միջեւ: Կամ էլ, իշխանութիւնը կարող է, օգտուելով «երրորդ ուժի» քիչ թէ շատ առարկայական գոյութեան հանգամանքից, կոշտացնել վերջին շրջանում փափկած դիրքորոշումը Կոնգրեսի հանդէպ: Ինչ պէտք է անի Կոնգրեսն այդ դէպքում, եթէ հենց Կոնգրեսի առաջնորդի վերջին ելոյթը տուեալ պարագայում տալիս է Կոնգրեսին արգելակող «մոգական» մի հարցի հիմք. «Բա Ադրբեյջան»:

Այդ պարագայում, պարզ է դառնում, որ Կոնգրեսի համար «երրորդ ուժի» հեռանկարը իսկապէս անհանգստացնող է եւ դրա դէմ պէտք է պայքարել: Ու թէեւ Տէր-Պետրոսեանը հարթակից յաջողութիւն է մտղթում 3-րդ, 4-րդ եւ այլերրորդ ուժերին, այդուհանդերձ ակնյայտ է, որ այդ ելոյթից դուրս, Կոնգրեսի եւ նրա համակիրների իրական գործողութիւնները միտուած են այսպէս կոչուած «երրորդ ուժի» հետ կապուած ցանկացած բան անխնայ վարկաբեկելուն եւ ծաղրելուն:

Մինչդեռ, այդ ամբողջի մէջ առաջանում է պարզ հարց. Արդեօք Կոնգրեսը եւ նրա առաջնորդը բացառում են, որ Հայաստանում

բերմունքը թողնում է հենց այդ սպաւորութիւնը:

Արդեօք «անհամաձայնութիւնն» է «երրորդ ուժի» նրանց չափանիշը, կամ «անհամաձայնութեան» որ աստիճանն է այդ չափանիշը Կոնգրեսի եւ նրա առաջնորդի համար: Կան արդեօք այդպիսի չափանիշներ: Գուցէ դրանք հրապարակուեն, որպէսզի հանրային եւ քաղաքական շրջանակները գիտենան, թէ ով իրաւունք ունի քննադատել կամ անհամաձայն լինել Կոնգրեսի հետ, թէ ինչն է այդ անհամաձայնութեան կամ քննադատութեան մէջ ընդունուում որպէս բանական փաստարկ, իսկ ինչը որպէս «ծախու վայրահաշուութիւն», թէ այդ քննադատութեան եւ անհամաձայնութեան սահմանը ինչքան է՝ երբ եւ մինչեւ ուր կարելի է քննադատել կամ անհամաձայն լինել, եւ երբ ու որտեղից պէտք է դադարեցնել այն՝ «երրորդ ուժին» ուղղուած կործանիչ հարուածի տակ չընկնելու համար:

Այդ չափանիշների սանդղակի հրապարակումը կը նպաստի իրավիճակի օպտիմալացմանը. մի կողմից թոյլ կը տայ շատ արագ եւ գրեթէ մաթեմատիկական ճշգրտութեամբ վեր հանել «երրորդ ուժին» եւ զանահարել «Տոմահակի» ճշգրտութեամբ, միւս կողմից կ'օգնի, որպէսզի այլեւայլ թիւրըմբռնումներով հանրային թէկուզ չնչին շրջանակներում անզամ չաղաւաղուի երկրի հիմնական ընդդիմութեան եւ առանցքային քաղաքական ուժի՝ Հայ ազգային կոնգրեսի ժողովրդավարահաճ եւ հանդուրժողական նկարագիրը:

«ԼՐԱԳԻՐ»

ՏԱՌԱՊԱՆՔԻ ԵՐԵՔ ՏԱՐԻ

ԿԱՐԷՆ ՅԱԿՈՐԲԱՆԵԱՆ

Ապրիլի 9-ին լրացաւ Սերժ Սարգսեանի նախագահ շխատելու 3 տարին: Մեծ հաշուով՝ դրանք տառապանքի տարիներ էին եւ՝ Սերժ Սարգսեանի, եւ՝ իր նեղ թիմի, եւ՝ ՀՀ նախագահի «իւրաքիչների», եւ՝ բիզնեսի բոլոր շերտերի եւ մնացեալի համար:

Սերժ Սարգսեանի վարած քաղաքականութիւնից դժգոհ են գրեթէ բոլորը՝ փողոցային առեւտրականից մինչեւ խոշոր գործարար: Բնականաբար ամենադժուարը շարքային քաղաքացու համար է, որովհետեւ իշխանութիւններն

կողմից ուզում են անձնական հարստութիւն կուտակել ու գերկենտրոնացում տնտեսական համակարգ կառուցել, բայց միւս կողմից էլ ուզում են, որ ժողովուրդը, պիզնէսի դաշտը չդժգոհեն ու երկրից չհեռանան: Այդպէս չի լինում:

Արձանագրենք, որ Սերժ Սարգսեանի թիմը խայտառակ ձախողման է ենթարկուել եւ՝ արտաքին քաղաքական ոլորտում, եւ՝ ներքին կեանքում: Սա ամենաանարդիւնաւէտ կառավարութիւնն է, որը անկախ ՀՀ-ն երբեւէ ունեցել է: Նախորդ բոլոր կառավարութիւններն էլ բացթողումներ ու սխալներ ունեցել են, բայց ոեւէ

Ղատելով հեռուստաալիքների պատրաստած նիւթերից՝ նախագահականի քարոզիչները լրջագոյն բարդութեան առաջ են կանգնած եղել, քանի որ նոյնիսկ պաշտօնական վիճակագրութեամբ որեւէ 2022-ի ծեռքերում չկայ, որպէսզի դա ներկայացուի որպէս Սարգսեանի վարած եռամսյա քաղաքականութեան արդիւնք

իրենց բոլշեւիկեան էնտոկրիազմով ու աղաղակող դիլետանտիզմով իրականացրած քաղաքականութեամբ նպաստեցին արտագաղթի աճին, իսկ դա ամենավատ արդիւնքն էր, որն ունեցանք այս երեք տարիների ընթացքում: Արձանագրուեց նաեւ կապիտալի արտահոսք:

Անկեղծ ասած՝ եթէ Հայ Ազգային Կոնգրեսի ներկայացուցիչն իր վերջին ասուխտում, իսկ «ազատ, բայց սերժատու» հեռուստաալիքներն էլ իրենց ռեպրորտաժներում չչիշեցնէին Սարգսեանի պաշտօնավարման երեք տարուայ մասին, ապա նրա եռամսեայ «սոսկին» դժուար անդրադառնալիք:

Իմ տպաւորութեամբ՝ երկիրն այս պահին ղեկավար, ըստ էութեան, չունի եւ դրա համար մոռացել էի, որ պէտք էր անդրադառնալ այդ «դարակազմիկ» իրադարձութեանը:

Վստահաբար՝ Ս. Սարգսեանն էլ է գգում, որ չի կարողացել իր ուզած ձեւով տնօրինել իշխանութիւնը, այլ պարզապէս զբաղեցրել է այդ պաշտօնը, իսկ դա ժամանակաւորութեան զգացում է առաջացնում, իսկ այդ զգացումը սարսափելի բան թէ՛ Սարգսեանի, թէ՛ ժողովրդի համար:

Դատելով հեռուստաալիքների պատրաստած նիւթերից՝ նախագահականի քարոզիչները լրջագոյն բարդութեան առաջ են կանգնած եղել, քանի որ նոյնիսկ պաշտօնական վիճակագրութեամբ որեւէ շօշափելի ձեռքբերում չկայ, որպէսզի դա ներկայացուի որպէս Սարգսեանի վարած եռամսեայ քաղաքականութեան արդիւնք: Ճիշդ հակառակը՝ պաշտօնական վիճակագրութիւնն այս երեք տարիներին արձանագրել է ՀՆԱ անկում, գների աճ, մակրոտնտեսական բոլոր հիմնական ցուցանիշների վատացում, արտաքին պարտքի շեշտակի աճ, աղքատութեան աւելացում եւ այլն: Ու ոչ մի յոյս, որ այս ամէնը կը կարգաւորուի, քանզի իշխանութիւնը ո՛չ ցանկութիւն, ո՛չ էլ առաւել եւս կարողութիւն չունի՝ դրական արդիւնքներ ապահովելու համար: Իրենք մի

մէկն աչքի չի ընկել փողի նկատմամբ այսպիսի ազահութեամբ, ցինիզմով, փարիսեցիութեամբ, դիլետանտիզմով, մարտնչող տգիտութեամբ ու դէմագոգրայով:

Սրանց տէրտէրական առողջանութեան տակ պլուտոկրատիան է թաքնուած, իսկ բարեպաշտութեան ու համեստ կենցաղ ունենալու քարոզի տակ՝ «Բենթլի» մակնիշի ավտոմեքենան:

Նայէք Սարգսեան նախագահի ու նոյն ազգանունով վարչապետի տուած խոստումներին ու արձանագրած արդիւնքներին եւ կը համոզուէք, որ վերեւում մեղմ եմ արտայայտուել:

« 7 ՕՐ »

ՄԱՍԻՍ ՏԱԲԱԹԱԹԵՐԹ
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈՒԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
 ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
 ԳԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ
 ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՂԱԻԹԵԱՆ
 ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
 ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August
 ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail)
 Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.
 Periodicals Postage Paid at Pasadena CA.
 Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆ

ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ. «ԱՊՐԻԼԻ 28-Ը ԿՐ ԴԱՌՆԱՅ ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ, ԿԱՄ ՋՐԲԱԺԱՆԻ ՕՐ»

Հայ Ազգային Կոնգրես (ՀԱԿ) ընդդիմադիր դաշինքի հանրահավաքը, որ Ուրբաթ Ապրիլի 8-ին մեկնարկելով Մատենադարանի մօտ, շարունակուեց Ազատութեան հրապարակում, եզրափակուեց Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի ծառայուն ելույթով:



ՀԱԿ-ի ղեկավարութիւնը երթի ժամանակ

Մինչ այդ, Մատենադարանի մօտ ելույթներ ունեցան նախկին վարչապետ Հրանդ Բազարտեանը, հանրայայտ ռեժիսոր ու դերասան Երուսանդ Մանարեանը, նախկին զինդատախազ Գագիկ Զհանգիրեանը, ՀՀՇ վարչութեան նախագահ Արամ Մանուկեանը, «Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդ, նախկին վարչապետ Արամ Սարգսեանը, Հայաստանի ժողովրդական կուսակցութեան առաջնորդ Ստեփան Դեմիրճեանը:

Կոնգրեսի համակարգող Լեւոն Զուրաբեանի կոչից յետոյ ցուցարարները, շարժման ղեկավարների առաջնորդութեամբ, երթով շարժուեցին դէպի Ազատութեան հրապարակ:

Լեւոն Տէր-Պետրոսեանը անդրադարձաւ, իր ձեռակերպմամբ՝ «մշտապէս կրկնող այն անհեթեթ պնդմանը, որ Հայ Ազգային Կոնգրեսը մոնոպոլիզացրել է ընդդիմութեան դաշտը»:

Հայ Ազգային Կոնգրեսի առաջնորդը յայտարարեց, որ եթէ իր ղեկավարած շարժումը, երեք տարի շարունակ «ենթարկուելով դաժանագոյն քաղաքական հալածանքներին», կարողացել է, այնուամենայնիւ, ընդդիմութեան դաշտում գրաւել գերիշխող դիրք՝ ինչը, Տէր-Պետրոսեանի խօսքով, «իրենց վերջին պնդմամբ խոստովանում ու հաստատում են նաեւ մեր ընդդիմախօսները», ապա դրա պատճառը պէտք է փնտռել բոլորովին այլ հարթութիւնում:

Լեւոն Տէր-Պետրոսեանը անդրադարձաւ նաեւ Հայաստանի քաղաքական դաշտում «երրորդ ուժի» ստեղծման անհրաժեշտութեան մասին «չդադարող խօսակցութիւններին»:

ՀԱԿ-ի առաջնորդն արձանագրեց, որ «երրորդ ուժի» ստեղծման անհրաժեշտութեան մասին խօսակցութիւնները նշանակում են, որ առաջիկայ գոյութիւն ունի երկու ուժ՝ իշխանութիւնը եւ Հայ Ազգային Կոնգրեսը:

«Այդ դէպքում հարց է ծագում, թէ ինչո՞ւ երեք տարուց աւելի տեւող խօսակցութիւնների ու նույն

նիսկ փորձերի արդիւնքում այդ երրորդ ուժն այդպէս էլ չի ձեւաւորուում: Ո՞վ է մեղաւոր», - հարցրեց Լեւոն Տէր-Պետրոսեանը՝ ինքն էլ պատասխանելով հարցին. - «Դա, իմ կարծիքով, տեղի է ունենում հետեւեալ պարզ պատճառով: Երրորդ ուժի դերի յաւակնորդներն ուզում են իրենց նպատակին հասնել ոչ թէ հասարակութեան հետ տարուող երկարատեւ ու յամուռ աշխատանքի եւ նրա վստահութիւնը շահելուն ուղղուած հսկայական ջանքերի գործադրման գնով, այլ պարզապէս Կոնգրեսի վարկաբեկելու ու նրան ասպարէզից հեռացնելու հեշտ թուացող ճանապարհով»:

ՀԱԿ-ի առաջնորդի խօսքով, «Երրորդ ուժի յաւակնորդները» նոյնիսկ չեն էլ թաքցնում, որ իրենց նպատակը ոչ թէ իշխանութեան, այլ Հայ Ազգային Կոնգրեսի այլընտրանք դառնալն է:

Ամփոփելով ելույթը՝ Լեւոն Տէր-Պետրոսեանը յայտարարեց, որ մինչեւ յաջորդ հանրահավաքը, որը կը կայանայ Ապրիլի 28-ին, Կոնգրեսը ակնկալում է, որ կը կատարուեն «յանուն երկխօսութեան» իրենց կողմից առաջ քաշուած երեք նուազագոյն պահանջները, որոնք են՝ «քաղբանտարկեալների ազատ արձակումը, Ազատութեան հրապարակում հանրահավաքներ անցկացնելու իրաւունքի վերականգնումը եւ Մարտի 1-ի սպանութիւնները բացայայտելու պաշտօնական հաստատացումը»:

«Եթէ դա տեղի չունենայ, ապա Հայ Ազգային Կոնգրեսը, սպառուած համարելով երկխօսութեան հնարաւորութիւնը, հարկադրուած է լինելու կտրուկ փոխել իր մարտավարութիւնն ու գործողութիւնների բնոյթը: Մենք դեռեւս հակուած չենք իշխանութեան հետ վերջնագրի լեզուով խօսելու, բայց ժողովրդի համբերութիւնն էլ չափ ու սահման ունի: Ապրիլի 28-ը պէտք է դառնայ կա՛մ երկխօսութեան սկզբնաւորման, կա՛մ էլ՝ իշխանութեան ու հասարակութեան վերջնական ջրբաժանի օր», - յայտարարեց ընդդիմադիր Հայ Ազգային Կոնգրեսի առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանը:

ԳԱԼՈՒՍ ՍԱՅԱԿԵԱՆ. «ԱՊՐԻԼԻ 28-ԻՆ ՈՐԵՒԷ ԱՐՏԱՌՈՅ ԲԱՆ ՏԵՂԻ ՉԻ ՈՒՆԵՆԱՅ»

Ապրիլի 28-ին, իշխող կուսակցութեան փոխնախագահի կարծիքով, որեւէ արտառոց բան տեղի չի ունենայ. - «Ոչ մի բան: Նոյն կրկնութիւնը, նորից նոյն հաստատումները, նոյն մօտեցումները: Ինձ համար ակնյայտ է, 15-ից [պահանջներից] 3 իջան, կարող է յետոյ 2,5 իջնեն, յետոյ 2 իջնեն: Դա դրական իմաստով եմ ասում,

որովհետեւ իրօք այդ խնդիրները կան, եւ այդ խնդիրների լուծումը պէտք է տեսնել միտինգներում: Անկախ նրանից, թէ ՀԱԿ-ը ինչ է ասում կամ ինչ պահանջներ է դնում, դրանք այն խնդիրներն են, որ երբ իրաւական տեսքից ժամանակը գալիս է, բոլորն էլ լուծելի են դառնում: Այնպէս որ, եթէ դրա համար է հանրահավաքը, կարող են չանել»:

ՌՈՒԲԷՆ ՅԱԿՈԲԵԱՆ. «ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅԱՆՋ ԿԱՅ, ՈՐ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԴԱՇՏԸ ՀԱՄԱԽՄԲՈՒԻ ԵՒ ՀԱԿԱԿՇՈՒ ԼԵՒՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ-ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ԴԱՇԻՆՔԻՆ»

«Ժառանգութիւն» կուսակցութեան փոխնախագահ Ռուբէն Յակոբեանը լրագրողներին հետ հանդիպման ժամանակ յայտարարել էր, թէ քաղաքական դաշտում նոր շրջան է եկել, ու քաղաքական պահանջ կայ, որ ընդդիմադիր դաշտը համախմբուի եւ հակակշռի Լեւոն Տէր-Պետրոսեան-Սերժ Սարգսեան դաշինքին: Պատասխանելով այն հարցին, թէ ո՞ր ուժերը պէտք է միաւորուեն, որպէսզի հակակշռ ստեղծեն այդ դաշինքին՝ նա ասել է, թէ ա՛յն ուժերը, որոնք չեն դաւաճանել իրենց սկզբունքներին:

«Ժառանգութիւնը» մօտ մէկ ամսուայ կտրուածքով որոշակի բանակցութիւնների մէջ է քաղաքական ուժերի հետ: Չեմ ուզում առանձնացնել: Դա չի նշանակում, որ ալեանա արդէն կարող է ձեւաւորուել: Ես կրկնում եմ, որ դա քաղաքական դաշտի համար պահանջ է, որ այն ուժերը, որ քաղաքական դաշտում ցոյց են տուել, որ չեն խաբում ժողովրդին կամ չեն խաբելու, եւ քաղաքական ճկունութեան անուան տակ քացարձակապէս չեն դաւաճանել իրենց սկզբունքներին, այդ ուժերը պէտք է միաւորուեն, պէտք է որոշակի համախումբ դառնան, առաւել եւս, որ 1 տարի է մնացել մինչեւ հերթական ընտրութիւնները, - նշել է Ռուբէն Յակոբեանը:

ԺԻՐԱՅՐ ՍԵՖԻԼԵԱՆ «ԽԻՍ ՊԱՐՏՈՒՈՂԱԿԱՆ» ԿՐ ՆԿԱՏԷ ԼԵՒՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԿԵՐՁԻՆ ԵԼՈՅԹԸ

«Սարգարապատ» շարժման նախաձեռնող խումբի անդամ Ժիրայր Սէֆիլեան «Խիստ պարտողական» կը նկատէ Ապրիլ 8-ի հանրահավաքին հնչած առաջին նախագահ, ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանի ելույթը՝ լրագրողներու խնդրանքով անդրադառնալով Լեւոն Տէր-Պետրոսեանի ելույթին, ինչպէս նաեւ իրեն ուղղուած «մեր պատասխանը Չեմ բեռլենին» արտայայտութեան:

«Իմ վերջին՝ 30 Մարտի ասուլիսի նախօրեակին Լեւոն Զուրաբեանը բարձրաձայնած էր, որ մինչեւ Ապրիլի 8-ը իրենք պատրաստ են լսել ՀԱԿ-ի գործունէութեան կամ գործողութիւններուն վերաբերեալ իւրաքանչիւր առաջարկ: Իմ առաջարկի փաթեթը եղած է ուղղակի այդ տրամաբանութեան համաթեքստին մէջ եւ Տէր-Պետրոսեանի լիշատակած միտքը եղած է ընդամենը մէկ առանձնացուած կէտ այդ փաթեթին», - նշեց Սէֆիլեանը եւ աւելցուց, թէ իրենք ականատես եղած են, թէ ինչպէս հանրահավաքներու ժամանակ բեմահարթակէն տարբեր գործիչներ, ներառեալ Տէր-Պետրոսեանը, ժողովուրդին կողմէ ինքնաբուխ հնչած «հիմա» բացականչութիւններուն նկատմամբ ճնշում կիրառած են փորձած են լուցնել անոնց:

«Կը կարծեմ «Լեւոն նախագահ» «ինքնաբուխ» բացականչութիւնը եւս հանգիստ կարելի էր լուցնել ուղղակի Տէր-Պետրոսեանի կողմէն՝ ժողովուրդին խնդրե-

նա վստահութիւն է յայտնել, թէ այդպիսի սկզբունքային ուժեր կան՝ մատնանշելով առաջին հերթին «Ժառանգութեանը»: Դաշինքի ստեղծման մօտալուտ ժամանակի մասին խօսելիս Ռուբէն Յակոբեանն ասել է, թէ ամէն ինչ կախուած է ներքաղաքական զարգացումներից:

«Չեմ ուզում անուններ տալ այս պահին, որովհետեւ սա շատ բնական գործընթաց է, ու եթէ այսօր անուններ տրուեն, կարող է գործընթացին խանգարել: Նկատի ունեմ, որ երբ երկու շաբաթ առաջ մենք ընդդիմադիր ուժերի հետ մի հանդիպում կազմակերպեցինք, որին մասնակցում էին նաեւ ՀԱԿ-ի անդամ կուսակցութիւնների ներկայացուցիչներ, պարզ հանդիպում էր. բարեւ, շնորհակալութիւն, որ աջակցել ու զօրակցել էք, եկէք խօսենք պետութեան վիճակի մասին: Չգիտես ինչպէս՝ այդ տեղեկատուութիւնը յայտնուեց լրատուամիջոցներում, եւ տոտալ լուտանքներ թափուեցին այն ուժերի հասցէին, որոնք մասնակցել էին այդ հավաքին, յատկապէս ՀԱԿ-ի անդամ ներկայացուցիչների մասին: Դրա համար ուժերի անունը չեմ ուզում տալ: Գործընթացը կայ, եւ ես յոյս ունեմ, որ այն ճիշդ աւարտ կ'ունենայ եւ կը ձեւաւորուի այդ դաշինքը, - նշել է նա:

լով, որ մինչեւ այն ժամանակը, երբ չէ վերացած բռնապետութիւնը՝ յանուն դիմադրական ընդհանուր գործին աւելի լայն գանգուածներու համախմբման ու ներգրաւման, լաւ պիտի ըլլայ չհնչեցնել այս կարգախօսը: Առաւել եւս, որ Լեւոն Տէր-Պետրոսեանը ի սկզբանէ համաժողովրդական շարժման աջակցող ժողովուրդին հետ պայմանաւորուածութիւն ունէր, որ վերջինս իրեն օգտագործէ իբրեւ աւագակապետութեան կազմաքանդման «գործիք»,- բնաւ Սէֆիլեան:

Ըստ անոր՝ իշխող վարչաձեւին ուղղուած պարտողական դիմումներուն փոխարէն, շատ աւելի լաւ պիտի ըլլար, որ ենթաթեքստ ունեցող ուղերձներ ուղղուէին «չես գիտեր ինչու արդէն մոռցուած «թաթար-մոնկոլական աւագակապետութեան պարագլուխներուն», եւ ոչ թէ գործընկերներուն, որոնք «պայքարած են եւ կը պայքարին այս վարչաձեւէն օր առաջ ազատուելու համար»:

«Բռնապետութեան դէմ պայքարի ներկայ փուլին ինծի համար անընդունելի է ընդդիմադիր գործիչներու կողմէն իրարու հանդէպ հրապարակային որեւէ հեզմանք, առաւել եւս անհանդուրժողականութեան իւրաքանչիւր դրսեւորում: Եւ բոլորովին այլ բան է հրապարակայնօրէն բանավիճիլ քաղաքական, գաղափարական ու մարտավարական հարթութիւններու վրայ», - նշեց Ժիրայր Սէֆիլեան:

Իշխանութեան եւ ընդդիմութեան միջեւ երկխօսութեան ծաւալման հարցում առաւել լաւատես է իշխող կողմից ի մաս կազմող «Բարգաւաճ Հայաստան»-ի ներկայացուցիչ Արամ Սաֆարեանը:

ԼՈՒՐԵՐ

ԻՍՐԱՅԷԼԸ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ Է ԱՏՐՊԵՅՃԱՆԻՆ

Վրացի լրատվական քաղաքագետ Պատա Զաքարիաշվիլին մեկնաբանել է Wikileaks-ի հերթական հրատարակումը, որը յայտնում է Իսրայելի եւ Ատրպեյձանի միջուկային զորքերի մասին:

Պատասխանելով NEWS.am-ի հարցին, թէ ինչո՞ւ է թեղ-Աւիվը հետաքրքրութիւն ցուցաբերում Ատրպեյձանի, այլ ոչ Հայաստանի կամ Վրաստանի նկատմամբ, քաղաքագետը նկատել է, որ պատճառներն աւելի քան ակնյայտ են. «Ամէն ինչ պարզ է եւ տրամաբանական: Ատրպեյձանը սահմանակից է Իրանին, եւ աւելի աշխարհիկ մասնեղական պետութիւն է: Ուստի Ատրպեյձանի միջոցով Իսրայելը փորձում է աւելի իմանալ Իրանում կատարուող իրադարձութիւնների մասին: Յանկացած նորմալ պետութիւն այդպէս էլ կը վարուէր: Եթէ ես լինէի Իսրայելը, այդպէս կ'անէի»:

Քաղաքագետը յիշեցրել է Իս-

րայելի եւ Իրանի միջուկային զորքերի յարաբերութիւնները, նախագահ Ահմադինեժադի՝ Իսրայելը երկրի երեսից ջնջելու յայտարարութիւնները մասին:

Փորձագէտն ընդգծել է, որ Հայաստանը նոյնպէս մտնում է Իսրայելի շահերի շրջանակում, քանի որ լաւ յարաբերութիւններ ունի Իրանի հետ: Ուստի զարմանալի չի լինի, եթէ պարզուի, որ Իսրայելը Երեւանի հետ էլ «լաւ յարաբերութիւններ ունի»: «Ապացուցներ չունեմ, բայց այդպէս կարծելու հիմքեր ունեմ», - ասել է Զաքարիաշվիլին:

Ըստ Wikileaks-ի հրատարակումների, 2007թ. Փետրուարի 16-ին Ատրպեյձանում Իսրայելի դեսպան Արթուր Լեւինի հանդիպել է ԱՄՆ դեսպան Էնն Դերսի հետ եւ յայտնել, որ Ատրպեյձանն ու Իսրայելը երկու գաղտնի համաձայնագիր են ստորագրել անվտանգութեան ոլորտում, բայց չի պատմել դրանց բովանդակութեան մասին:

ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՆԱԽԱԳԱՐԸ ԿՈՉ Է ԱՐԵԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՅԱՆՐՈՒԹԵԱՆԸ՝ ԳՆԴԱԿՈՑԵԼ ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱՂԸ ԼԻԲԻԱԿԱՆ ՍՅԵՆԱՐՈՎ

Ատրպեյձանի նախագահ Իլհամ Ալիևը, փաստացի կոչ է արել միջազգային հանրութեանը գնդակոծել Լեռնային Ղարաբաղն ու անվտանգութեան գոտին լիբիական սցենարով: Նման եզրակացութեան կարելի է հանգել ռուսական պետական «Ռոսիա-24» հեռուստաալիքին նրա տուած հարցազրույցից:

Պատասխանելով լրագրողի հարցին՝ ղարաբաղեան հակամարտութեան խաղաղ կարգաւորման հեռանկարների եւ այդ գործընթացում միջնորդների դերի մասին, Ադրբեյջանի նախագահն ասել է, թէ «ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդը 4 բանաձեւ է ընդունել Ադրբեյջանի տարածքներից հայկական զաւթիչ ուժերի դուրսբերման վերաբերեալ, եւ այդ բանաձեւերն առ այսօր չեն կատարուել»:

Ապա Ալիևն ասել է. «Երբ մենք տեսնում ենք, որ Լիբիայի

վերաբերեալ Անվտանգութեան Խորհրդի բանաձեւերը սկսում են կատարուել դրանց ընդունումից բաւաքիտէն ժամեր անց, իսկ Լեռնային Ղարաբաղի մասին բանաձեւերը չեն կատարուում 17-18 տարի, բնականաբար, հարց է ծագում, ո՞րն է նման օպերատիւութեան պատճառը, իսկ մեր դէպքում՝ նման պատիւութեան»:

Եթէ հաշուի առնենք, որ արեւմտեան կողմից իրականացված ռազմական գործողությունները Լիբիային՝ մեղադրելով այդ երկրի ղեկավարութեանը ՄԱԿ-ի ԱՆ բանաձեւերը չկատարելու մէջ, ապա Ալիևի յայտարարութիւնը կարելի է մեկնաբանել որպէս Ղարաբաղում նման գործողութիւնների դիմելու կոչ:

Ալիևը նաեւ կոչ է արել Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւին ակտիւ դեր ստանձնել այդ հարցում:

ՄԻՆՍԿԻ ԽՈՒՄԲԻ ՅԱՄԱՆԱԽԱԳԱՐՆԵՐԸ ՆԱԼՊԱՆՏԵԱՆԻ ՅԵՏ ՔՆՆԱՐԿԱԾ ԵՆ ԱՐՑԱԽԵԱՆ ՅԻՄՆԱԽՆԴՐԻ ԿԱՐԳԱԻՈՐՄԱՆ ՅԱՐՑԵՐԸ

Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալպանտեան Ապրիլ 11-ին ընդունած է ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահները եւ ԵԱՀԿ գործող նախագահի լիարտեղ ներկայացուցիչը:

Հանդիպման ընթացքին քննարկուած են արցախեան հիմնախնդրի կարգաւորման ներկայ փուլին առնչուող շարք մը հարցեր:

Ըստ ԱԳՆ տեղեկութիւններուն, Էդուարդ Նալպանտեան համանախագահներու ու շաղրութիւնը հրաւիրած է անցեալ տարի Լեռնային Ղարաբաղի յարակից տարածքներ իրականացուցած համախաղաղահաներու դաշտային գնահատման առաքելութեան գեկույցի Ատրպեյձանի կողմէն աղաւաղման եւ այդ փաստաթուղթը իր ռազմատենչ հետադարձութիւնը արդարացնելուն ծառայեցնելու փորձերուն վրայ: Ան աւելցուցած է, որ Ատրպեյձանի կողմէն գեկույցն առնչութեամբ կատարուող մեկնաբանութիւնները կը հակասեն համանախագահներու ներկայացուցած գնահատականներուն, այդպիսով ստուերելով ոչ միայն անոնց ջանքերը, այլեւ բացասաբար ազդելով բանակցային գործընթացին վրայ:

Հայաստանի ԱԳ նախարարն ու Մինսկի խումբի համանախագահները քննարկած են շփման գիծի միջադէպերու կանխարգելման եւ հետաքննութեան եղանակի ստեղծման հարաւորութիւնը՝ համաձայն Սոչիի մէջ Հայաստանի, Ռուսաստանի եւ Ատրպեյձանի նախագահներուն կողմէ եղած յայտարարութեան:

Միւս կողմէ, Հայ Ազգային Կոնգրէսի արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի անդամ Վլադիմիր Կարապետեան մտահոգ է ԵԱՀԿ Մինսկի խումբի համանա-

խագահներու եւ ԵԱՀԿ գործող նախագահի լիարտեղ ներկայացուցիչի հետ Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալպանտեանի հանդիպման մասին Հայաստանի ԱԳՆ մամուլի ծառայութեան տարածած հաղորդագրութեան առնչութեամբ:

Tert.am-ի հետ զրույցի ընթացքին Կարապետեան ըսաւ, որ ինքը մտահոգ է մասնաւորապէս հաղորդագրութեան այն հատուածին առնչութեամբ, ուր նշուած է, թէ հանդիպման ընթացքին Էդուարդ Նալպանտեան համանախագահներու ու շաղրութիւնը հրաւիրեց անցեալ տարի Լեռնային Ղարաբաղի յարակից տարածքներ իրականացուած համախաղաղահաներու դաշտային գնահատման առաքելութեան գեկույցին:

«Վրդովմուռք է առաջացնում Հայաստանի արտգործնախարարութեան տարածած մամուլի հաղորդագրութիւնը, ուր ազատագրուած տարածքներ կամ պաշտօնապէս՝ ԼՂ տարածքները ՀՀ ԱԳՆ-ն կոչում է ԼՂ յարակից տարածքներ», - ըսաւ ան: Կարապետեանի խօսքով՝ հարցեր կը յառաջանան, թէ արդեօք ՀՀ ԱԳՆ-ն չի՞ գիտեր, որ այդ տարածքները Սահմանադրութեամբ ամրագրած են ԼՂՀ սահմաններու մէջ: «Ի՞նչ իրաւունքով է ՀՀ ԱԳՆ-ն խախտում ԼՂՀ տարածքային ամբողջականութիւնը: Ինչո՞ւ է Հայաստանը օգտագործում տարածքները ի օգուտ Ատրպեյձանի կանխորոշող ձեւակերպում եւ ձեռնպահ մնում պաշտօնական հաղորդագրութեան մէջ նշել հայաստան ձեւակերպում: Ինչո՞ւ ԼՂՀ ԱԳՆ-ն չի արձագանգում Հայաստանի նման պարտաւորական կեցուածքին», - հարց տուաւ Վլադիմիր Կարապետեանը:

ԹՈՒՐԵՐԸ ԿԸ ԲՈՂՈՔԵՆ ՅԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԺԱՊԱԻՆԻ ԹԵՅՐԱՆԻ ՄԷՋ ՑՈՒՑԱԴՐՈՒԹԵԱՆ ԴԵՄ

Թուրքիոյ մէջ գործող այսպէս կոչուած «հայերու անհիմն պնդումներուն դէմ պայքարի միութիւնը» (ASIMDER) Իրանի իշխանութիւններէն կը պահանջէ չեղեալ յայտարարել 24 Ապրիլին թեհրանի մէջ Հայոց Յեղասպանութեան վերաբերեալ ժապաւէնի ցուցադրութեան թույլտուութիւնը: Այս մասին կը տեղեկացնէ թրքական «Հապէր3» (haber3) կայքը:

Լրատուամիջոցին փոխանցմամբ՝ ASIMDER-ի ղեկավար Կէօքսալ Կիւլպէյ տեղեկացուցած է, որ իր կազմակերպութիւնը նամակ ուղղած է էրզրումի մէջ Իրանի գլխաւոր հիւպատոսութեան՝ ժապաւէնի ցուցադրութիւնը կանխելու պահանջով:

«Մենք կը պահանջենք, որ

թեհրանի մէջ չցուցադրուի «Յեղասպանութեան լուսանկարիչը» ժապաւէնը: Պէտք է թոյլ տալ, որ ատոր ցուցադրութիւնը վնասէ թուրք-իրանական յարաբերութիւնները», - կ'ըսուի նամակին մէջ:

Յիշեցնենք, որ օրեր առաջ Երեւանի մէջ կայացած ասուլիսի մը ընթացքին՝ շարժանկարի բեմադրիչ Տիգրան Խզմալեան յայտարարած էր, որ 24 Ապրիլին թեհրանի մէջ պիտի ցուցադրուի իր նկարահանած «Արմին Վէկներ՝ Յեղասպանութեան լուսանկարիչ» ժապաւէնը: Ըստ բեմադրիչին՝ ցուցադրութեան ներկայ պիտի ըլլան շարք մը իրանցի խորհրդարանականներ: Խզմալեան նաեւ տեղեկացուցած էր, որ ժապաւէնը պիտի ցուցադրուի նաեւ իրանական հեռուստաալիքներէն մէկով:

ՅԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ ՎԱԻԵՐԱՅՈՒՑ

Շաբաւակուած էջ 1-էն

պանութիւն: Արա Նազարեան ըսած էր, որ նախատեսուող ձեւակերպումը իր բնույթով կը հանդիսանայ աւելի չէզոք եւ արդէն որեւէ տարանջատում չի մտցնէր ՀՀ եւ հարեւան երկիրներուն միջեւ՝ անով իսկ վերացնելով գործող ձեւակերպու-

մէն բխող այն եզրակացութիւնը, թէ Թուրքիայէն եւ Իրանէն Հայաստանի Հանրապետութեան անվտանգութեան ապահովման խնդիրը առաջնահերթութիւն ունի: Այսինքն, ըստ Նազարեանի, նախատեսուող ձեւակերպումը իր մէջ կը ներառէ ողջ Հայաստանի Հանրապետութեան անվտանգութեան ապահովումը:

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՅԱՆԳՆԵՐԸ Կ'ԱՐՁԱՆԱԳՈՒ

Շաբաւակուած էջ 1-էն

նակցութիւնը հանրահաւաքներուն: Իշխանութիւններն ու օրէնքները սահմանափակած են կրօնական ազատութիւնը: Կաշտակարարութիւնը (փտածու ինչպէս) տակաւին կը շարունակեն խնդիր մնալ, եւ իշխանութիւնները՝ անոր դէմ պայքարելու համար սահմանափակ ջանքեր կը գործադրեն:

Չեկոյցը կ'արձանագրէ, որ իշխանութիւնները որեւէ քաղաքական սպանութիւն չեն իրականացուցած:

Փաստաթուղթին մէջ կը նշուի Չարենցաւանի ոստիկանական բաժանմունքին մէջ ոստիկաններու կողմէն վահան խալաֆեանի սպանութեան գործը, որ ոստիկանապետ Ալիկ Սարգսեանը նախապէս որակած էր «ինքնասպանութիւն», հետագային՝ ներողութիւն խնդրած անոր համար, երբ Յատուկ քննչական ծառայութիւնը պարզած էր, որ տեղի ունեցածը ինքնասպանութիւն չէ:

Չեկոյցը մանրամասն կ'անդրադառնայ նաեւ բանակին մէջ տեղի ունեցած սպանութիւններուն ու մահացած ելքերով միջադէպերուն:

«Մարդու իրաւունքներ - 2010» գեկույցը կ'արձանագրէ, որ քաղաքական գործունէութեան համար մեղադրանք առաջադրուած է շատերու հանդէպ՝ «զանգուածային անկարգութիւններ» կազմակերպելու մեղադրանքով: Կը նշուի, որ նմանատիպ մեղադրանք առաջադրուած է նաեւ ընդդիմադիր «Հայկական ժամանակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Նիկոլ Փաշինեանին:

Կը փաստուի, որ 2008-ի նախագահական ընտրութիւններու ընթացքին ընդդիմութեան աջակցութիւն ցուցաբերած Սուքիասեաններու ընտանիքներու գործառույթները եղած են իշխանութիւններու թիրախի, Փետրուարի 12-ին Սարիբէկ Սուքիասեանը 72 ժամով ձերբակալուած է, ոմն գործարար Գոռ Դաւթեանը պատանդ պահելու մեղադրանքով, բայց ապացուցի բացակայութեան պատճառով ազատ արձակուած է:

Չեկոյցը կ'անդրադառնայ նաեւ Հայաստանի մէջ կրօնական ազատութիւններու, աշխատանքային իրաւունքներու, միասեռականներու, բանտերու եւ ազատագրկման վայրերու խնդիրներուն:

ԺՆՆԵԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՐՑԻՆ ՇՈՒՐՁ

Կիրակի, Ապրիլ 10-ին ժընեի հայկական եկեղեցին ժամանողները գտնուեցան տհաճ անակնկալի առջև՝ իրենց առջև փակ գտնելով եկեղեցւոյ դռները: Արդարեւ, Մայր Աթոռի եւ համայնքի միջեւ ծագած տարակարծութիւնները հասած են հոն, որ ստիպած են եկեղեցւոյ պատասխանատուներուն՝ դիմելու նման կտրուկ քայլի:

Հարցի ծախսերուն վրայաւելելու լոյս սփռելու նպատակով, ստորեւ կ'արտատպենք Երեւանի մէջ լոյս տեսնող «Հրապարակ» թերթի հարցազրոյցը Զուիցերիոյ Հայ Առաքելական եկեղեցւոյ Խորհուրդի նախագահ Վիգէն Վարձպետի հետ:

«ՄԱՍԻՍ»

ՄԱՐԻՆԷ ԽԱՌԱՏԵԱՆ

Շուեյցարիայի հայ համայնքի ու Մայր Աթոռի միջեւ լարուած հասել է գագաթնակէտին: Մինչ Գարեգին Բ-ն Շուեյցարիայի նախագահ Միշելին կալմի-ռեյին է ներկայացնում Շուեյցարիայի թեմի նորանշանակ առաջնորդական տեղապահ Տ. Մեսրոպ վարդապետ Պարսամեանին, շուեյցարահայերը յայտարարում են, թէ հնարաւոր է գործընթացը տեղափոխեն իրաւական հարթութիւն:

Մենք տեղեկացրել էինք, որ դեռ Մարտի 6-ին ժընեւահայութիւնը, ոչ էր ասել Ամենայն հայոց կաթողիկոսի ցանկութեանը՝ եկեղեցական թեմ հիմնել Շուեյցարիայի ժընեւ քաղաքում: Ժընեւի Հայ առաքելական եկեղեցու անդամական ժողովը 88 դէմ, 2 կողմ ձայներով մերժել էր թեմ հիմնելու կաթողիկոսի առաջարկը, որը պէտք է գործեր ժընեւի հայ համայնքի միջոցներով: Ժընեւահայ ոչ մեծաթիւ համայնքը կարծում է, որ դրա անհրաժեշտութիւնը չկայ, որ եկեղեցու ներկայ կարգավիճակը բաւարար է, ու լրացուցիչ ծախսեր պէտք չէ բարդել համայնքի ուսերին: Շուեյցարահայ համայնքում լուրեր են շրջում, թէ կաթողիկոսը դժգոհ է իրենց հանգանակութիւնների չափից՝ ուղղուած էջմիածնին, լուրջ գումար է ակնկալում Սփիւռքից, սուեայ դէպքում՝ Շուեյցարիայից, դա է պատճառը, որ ուզում է փոխոխութիւն կատարել: Սփիւռքին որպէս, կթու կով օգտագործելու ձեւաչափը նոր չէ, սակայն սփիւռքահայերն անընդունելի են համարում իրենց ուղղած, դիկտատորական ե ուղերձները:

Օրերս Մայր Աթոռի դիւանապետ Արշակ եպիսկոպոս Խաչատրեանը նամակով տեղեկացրել է Շուեյցարիայի եկեղեցու խորհրդին, որ էջմիածնում գումարուած գերագոյն հոգեւոր ժողովը որոշում է կայացրել Շուեյցարիայի հայոց թեմում առաջնորդական տեղապահ կարգել Տ. Մեսրոպ վարդապետ Պարսամեանին եւ հետ կանչել եկեղեցու ներկայ հովիւ՝ ժընեւի Սբ. Յակոբ եկեղեցու հոգեւոր հովիւ Տ. Աբէլ քահանայ Մանուկեանին:

Մարտի 25-ի իրենց պատասխան նամակում ժընեւի առաքելական եկեղեցու խորհուրդն, անընդունելի, անթոյլատրելի ու անօրինական է յայտարարել էջմիածնի որոշումն ու յայտարարել, թէ թոյլ չի տայ ներկայիս հոգեւոր հովիւ Աբէլ քահանայ Մանուկեանին լքել հոգեւոր հօտը, ու չի պատրաստուած ընդունել կամ հրաւիրել նորանշանակ թեմի առաջնորդ Մեսրոպ վարդապետ Պարսամեանին: «Մենք չենք ընդունի նաեւ մեր կողմից չկանչուած որեւէ այլ քահանայ ժընեւի ներկայ հովիւ Աբէլ քահանայի փոխարէն: Մեզ հաճելի է Աբէլ քահանայի ծառայութիւնը, եւ Շուեյցարիայի առաքելական

եկեղեցու հոգեւոր խորհուրդը որոշել է պահել նրան որպէս հովիւ», - յայտարարել է խորհուրդը՝ յաւելելով, որ իրենց որոշումը վերջնական է, իրենք ենթարկուած են Շուեյցարիայում գործող օրէնքներին ու չեն ընդունում այլ իշխանութիւն՝ նման որոշումների կայացման հարցում, առաւել եւս՝ իրենց փոխարէն: Երէկ գրուեցեցինք Շուեյցարիայի առաքելական եկեղեցու խորհրդի նախագահ Վիգէն Վարձպետի հետ:

- Պարոն Վարձպետ, Դուք ասում էք, որ խորհրդի որոշումը վերջնական է, եւ համայնքը չի ընդունելու նոր սրբազանիմ ով էլ լինի: Ի՞նչ է լինելու այդ պարագայում:

- Խնդիրը հետեւեալն է, մենք Շուեյցարիայի մէջ եկեղեցական ասամբլիա ունենք, որ ժողովրդից է բաղկացած, եւ մեր ժողովուրդը ոչ փափաք ունի եւ ոչ էլ հարկ է համարում, որ այստեղ նոր սրբազան կամ թեմ ունենանք: Սա արդէն 3-րդ անգամ է, որ մեր անդամներին հրաւիրում ենք, ներկայացնում ենք կաթողիկոսի ուղածը՝ թեմ ստեղծելու հետ կապուած, եւ ժողովուրդը չի ընդունում դա: Մենք չենք կարող դէմ գնալ համայնքին:

- Այդ դէպքում, ձեր կարծիքով, ինչն է էջմիածնի պնդում այս հարցը:

- Մենք չգիտէինք, որ թեմ հիմնելու որոշում է եղել: Երբ Վիգէն Սրբազանը այստեղ երկրորդ քահանայ օծեց, նա ասաց, որ որոշուել է, որ այստեղ թեմ լինի, եւ սա է մեր թեմի կանոնագիրը: Այդ օրուանից մեր Շուեյցարիայի համայնքը չի ընդունում այդ որոշումը: Այստեղ որոշակի անձնութիւն էր եղել, ներկայացուել էր, որ 20 հազարից աւելի հայութիւն կայ Շուեյցարիայում, ինչը սխալ է, քանի որ 5 հազարից աւելի չկայ: Ինձնից առաջ եկեղեցու խորհրդի երեք նախագահ այս խնդրով զբաղուել են, ներկայացրել են համայնքի անդամներին, սակայն անդամները մերժել են:

- Փաստօրէն, էջմիածնի իրենց է պնդում, շուեյցարահայ համայնքը իրենց: Եստեղ ի՞նչ լուծում է հնարաւոր:

- Լուծումը չգիտեմ: Եթէ կարող ենք էջմիածնի հետ մենք լուծում գտնել, մենք պատրաստ ենք, բայց ոչ այն լուծումը, որ վեհափառ Տէրը մեզ ստիպում կամ պարտադրում է, թէ հսպէս է, ու ժողովուրդը պէտք է ընդունի: Մենք, մինչեւ որ համայնքը չընդունի, այստեղ չենք կարող իրականացնել, քանի որ ենթարկուած ենք շուեյցարական օրէնքներին: Իսկ այդ օրէնքով՝ եկեղեցու համայնքը պէտք է նման որոշումներ կայացնի: Մեր հոգեւոր հովիւի վրայ էլ ճնշում կայ էջմիածնից, թէ պիտի հանենք ձեզ, եթէ ժողովրդին չհամոզէք: Նման փոքր բաներ կան, բայց մեր համայնքը մեր Տէր հօրը յարգում եւ սիրում է, մեր 16 տարուայ Տէր հայրն է:

- Ներկայումս եկեղեցու հոգեւոր Խորհուրդը եւ Տէր հայրն ի՞նչ են պատրաստուում անել:

- Հիմա որեւէ բան չենք ձեռնարկում, որովհետեւ մենք մեր բոլոր նամակներն ուղարկել ենք, բայց, դժբախտաբար, այն նամակներին, որ մենք ենք գրում, վեհափառն ուղարկութեան չի արժանացնում եւ հեռուստատեսութեամբ Շուեյցարիայի նոր վարդապետին է ներկայացնում: Այդ ճնշումները մեր համայնքի վրայ շատ են ազդում:

- Ասել է թէ՛ հնարաւոր է պառակտում լինի էջմիածնի եւ համայնքի միջեւ:

- Այո, որովհետեւ վեհափառը չի փորձում խնդիրը լուծել, հաշուի նստել համայնքի հետ, ինքը ճնշում է գործադրում: Մենք այստեղ դեմոկրատիկ երկիր ենք, չենք կարող այդ բաներն ընդունել: Ես հիմա իմ անունից չեմ ասում, այլ քաղաքի անունից, եւ գաղութն է, որ մեզ ընտրել է եւ ուզում է, որ իրենց որոշումները կատարենք:

- Իսկ ճիշտ է, որ պատճառը նաեւ այն է, որ Սփիւռքից էջմիածնի գնացող գումարները չեն բաւարարում Կաթողիկոսին կամ քիչ են, եւ գումարների հետ է կապուած այս փոփոխութիւնը:

- Ուրեմն գումարների հետ խնդիրն ասեմ: Մենք այսօր Շուեյցարիայից նուիրատուութիւններով եւ ֆոնտերով, որ դէպի Հայաստան ձերանոցներ, որբանոցներ եւ եկեղեցիներ են գնում, գրեթէ 3 մլն. եւրոյի չափ փող է ուղարկուում Շուեյցարիայից տարեկան, բայց էջմիածնին չի հասնում թերեւս: Իսկ մենք քանի անգամ վեհափառի հետ երբ խօսեցինք, ասել ենք, որ մենք տարուայ վերջում մեր եկեղեցու միջոցներով չենք կարողանում եկեղեցու ծախսերը փակել: Եւ եկեղեցու միջոցներից չենք կարող որեւէ բան էջմիածնին ուղարկել:

- Ասել է թէ կոնկրետ պահանջ կա՞յ ձեզանից՝ գումարի, էջմիածնի կողմից:

- Կոնկրետ գումար դրուած չէ, բայց միշտ ասում է, որ մենք Շուեյցարիայից դրամ չենք ստանում, դուք որ հարուստ մարդիկ էք, բայց էջմիածնին գումար չի գալիս: Մենք տեղի եկեղեցու ֆոնտից չենք կարողանում ուղարկել, բայց այստեղի մարդիկ իրենց ֆոնտերով գումարներ ուղարկում են դէպի Հայաստան: Բայց մենք, իբրեւ եկեղեցական ֆոնտ, չենք կարող էջմիածնին գումար ուղարկել,

որովհետեւ մենք չենք կարողանում տեղի եկեղեցու հոգսերը հոգայ:

- Լաւ, դա որքանով կապ ունի հոգեւոր հովիւի փոփոխութեան հետ: Կապ ունի՞, թէ ոչ:

- Հոգեւոր հովիւի փոփոխութիւն չկայ, որովհետեւ մենք մեր Տէր հօրը պահում ենք եկեղեցում, եւ ժողովուրդը չի ընդունում, ում էլ որ վեհափառն ասի, թէ այստեղ Տէր հայր պիտի լինի, ու այստեղ վարդապետին պիտի դնեմ: Չի ընդունում:

- Հիմա որ Մեսրոպ վարդապետը գայ, իրեն չէ՞ք ընդունելու:

- Այո, չենք ընդունելու եւ վեհափառին ասել ենք, որ եթե ուղարկէք, մենք իրեն հետ ենք ուղարկելու: Ասել ենք, բայց վեհափառն ուղարկութիւն չի դարձնում մեր խօսքերին: Եթէ պիտի գայ, պիտի գայ պարապ տեղը եկեղեցում նստի, բայց չպիտի արտօսենք, որ աղօթի կամ քարոզի, որովհետեւ ժողովուրդը չի ընդունել: Մենք ժողովուրդական ենք:

- Նաեւ Կաթողիկոսը պահանջել էր, որ ներկայ հովիւ Աբէլ քահանայ Մանուկեանը միջեւ Ապրիլի 1-ը գայ ու ներկայանայ իրեն : Եկե՞լ է Հայաստան:

- Տէր հայրը չկարողացաւ այստեղ թողնել-գալ, որովհետեւ այս խնդիրներով գաղութում իրար անցած վիճակում են: Բոլոր ժողովուրդը, որ մենք կարողացել էինք եկեղեցուն մօտեցնել, այս խնդիրների պատճառով համարեա հեռանում է: Տէր հայրը ստիպուած է այստեղ մնալ:

- Սա ի՞նչ ազդեցութիւն կ'ունենայ Հայաստանի եւ շուեյցարահայ համայնքի կապերի վրայ:

- Չգիտեմ: Մենք գիտենք, որ մենք Շուեյցարիայում միշտ ուզում ենք դէպի էջմիածնի կապուած լինել, որովհետեւ մեր Մայր եկեղեցին է, բայց այս ծանր բաները, որ վեհափառը մեր ժողովրդին է ստիպում, դա է, որ շատ դժուար է մեր համայնքն ընդունում:

- Իսկ մտավախութիւն չունե՞ք, որ հնարաւոր է Կաթողիկոսը կարգալոյծ անի ձեր քահանային:

- Կարգալոյծ անելու համար, կարծեմ, պէտք է որ եկեղեցական օրէնքներով շատ մեծ սխալ անի Տէր հայրը՝ որեւէ բան խօսի մեր կրօնի դէմ կամ ոչ ճիշտ քայլ անի կրօնի դէմ: Մինչեւ որ կրօնի դէմ մեր Տէր հայրը որեւէ բան չի արել, չեմ կարծում, որ վեհափառն ինչ - որ բան գտնի, որ կարգալոյծ անի մեր Տէր հօրը: Դա եկեղեցական օրէնքների մէջ է գրուած:

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 for USA

* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.

* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City:----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax :-----

ԻՐԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԿԱԹԳԾԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ԱՍԻԱՆ ՄԻԱՑՆԵԼ ԵՒՐՈՊԱՅԻՆ

ՍԱՐԳԻՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Գլոբալիզացիայի գործընթացներին զուգահեռ աշխարհակառուցումը ենթարկվում է նաև տարածաշրջանային ինտեգրման գործընթացներ, որտեղ իւրաքանչիւր երկիր փորձում է առաւելագոյն չափով ներգրավուած լինել տարբեր քաղաքական եւ տնտեսական միութիւններում ու դաշինքներում: Այդ գարգացումներից գերծ չեն նաեւ Իրանը եւ Հայաստանը: Այսօր Հայաստանի եւ Իրանի տնտեսական քաղաքականութիւնները ուղղուած են տնտեսական համագործակցութեան ակտիւացմանը, տարածաշրջանային անվտանգութեան ամրապնդմանը, տրանսպորտային եւ էներգետիկ նախագծերում ընդգրկմանը:

Յօդուածում հիմնականում ուշադրութիւն կը դարձնենք հետեւեալ հարցերի վրայ՝ երկաթգծի նշանակութիւնը տարածաշրջանում, Ռուսաստանի, ինչպէս նաեւ Թուրքիայի եւ Ադրբեյջանի դիրքորոշումները տեւալ նախագծի վերաբերեալ, երկաթգծի դրական ազդեցութիւնը Հայաստանի տնտեսութեան եւ Իրանի համար:

ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս Իրանը, այնպէս էլ Հայաստանը գտնուած են իւրօրինակ աշխարհաքաղաքական շրջապատման մէջ եւ դա կարող է աւելի մերձեցնել ու համադրել մեր պետութիւնների շահերը: Ընդհանրապէս Հայաստանի եւ Իրանի համագործակցութիւնը կարելի է համարել յաջողած եւ գարգացման նոր հեռանկարներ խոստացող, այդ տեսակետից, Իրան-Հայաստան երկաթգծի շահերը Հայաստանի եւ Իրանի համար ունի ռազմավարական նշանակութիւն եւ դրա արդիւնաւետութիւնը կասկած չի յարուցում: Եթէ Հայաստանը ցամաքային երկիր է, գտնուած է շրջափակման մէջ երկու հարեւան երկրների կողմից եւ ցանկանում է դէպի ծով դուրս գալու կաշուն հնարաւորութիւններ ունենալ երկաթգծի միջոցով, ապա Իրանի համար այն աւելի շուտ այլընտրանքային նոր ուղի է, որը Իրանի ռազմավարական դերի մեծացման տեսակետից մեծ նշանակութիւն է ունենալու: Այսինքն, Իրանահայկական երկաթգծի նպատակը է թէ՛ երկու երկրների տնտեսութիւնների խթանմանը, թէ՛ տարածաշրջանում Իրանի եւ Հայաստանի ռազմավարական նշանակութեան բարձրացմանը:

մանր:

Ընդհանուր առմամբ Իրան-Հայաստան երկաթգծի կառուցումը տարածաշրջանի համար կունենայ՝

1. Հաւասարակշռող նշանակութիւն, որը կը չափաւորի Կարս-Ախալքալաք-Բաքու, ինչպէս նաեւ Նախիջեւան-Կարս երկաթգծերի ազդեցութիւնը:

2. Համագործակցութեան նշանակութիւն՝ այն կը նպաստի Իրանի եւ Հայաստանի տնտեսութիւնների, ինչպէս նաեւ Ռուսաստանի տնտեսութիւնների միջեւ յարաբերութիւնների ամրացմանը եւ աշխուժացմանը:

3. Չուտ տնտեսական նշանակութիւն՝ երկաթգծի շինարարութիւնը եւ շահագործումը ապահովելու են հանրապետութեան տարեկան համախառն ներքին արդիւնքի եւ բիւջէի մուտքերի աճ, նոր աշխատատեղերի ստեղծում, տնտեսական կեանքի աշխուժացում:

4. Տարածաշրջանին տնտեսական գարգացում ապահովող նշանակութիւն՝ այն Հայաստանին եւ Իրանին որոշ հարեւան երկրների տնտեսութիւնների գարգացման համար դրական նշանակութիւն կունենայ, մասնաւորապէս կը նպաստի Վրաստանի, Ռուսաստանի, Թուրքմենստանի առեւտրատնտեսական յարաբերութիւնների եւ տրանսպորտային բեռնափոխադրումների աշխուժացմանը:

5. Միաւորող նշանակութիւն՝ Իրան-Հայաստան երկաթգծի կառուցումը կը միաւորի Իրանի երկաթուղային համակարգը Հայաստանի երկաթուղային համակարգի հետ, ինչը հնարաւորութիւն կը տայ Իրանին եւ այլ ասիական երկրներին Վրաստանի սեւծովեան նաւահանգիստների միջոցով, իսկ հետագայում նաեւ Թուրքիայի տարածքով աւելի ապահով եւ ձեռնտու ելք ապահովել դէպի Եւրոպա: Հայաստանը իր հերթին ելք կունենայ Իրանով դէպի Պակիստան եւ Հնդկաստան, ինչպէս նաեւ Կենտրոնական Ասիայի երկրներ, այնտեղից Ռուսաստան եւ Չինաստան: Իրան-Հայաստան երկաթգծի կառուցումը Հայաստանին թոյլ կը տայ դուրս գալ Կասպից ծով եւ Պարսից ծոց՝ դրանով վերացնելով տրանսպորտային կախւածութիւնը Վրաստանից: Նշենք, որ ներկայումս կառուցուած է երկաթգիծ, որը Չինաստանից Կենտրոնական Ասիայով միանում է Իրանի երկաթուղային համակարգին, ինչով հնարաւորութիւն է ստեղծում Իրանին Եւրոպայից դէպի

ՀԱՓԱԶԱՆՑ ՏԵՈՒՐ ՊԱՏԿԵՐ, ԿԱՄ ԳՆԱԾ, ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹԻՒՆ, ԿՈՌՈՒՊՑԻԱ

ԼՈՒՍԻՆԷ ԽԱԶԱՏՐԵԱՆ

Հայաստանցիների մեծ մասը՝ 81%-ը, բաւարարուած չէ հայրենիքում տիրող ընդհանուր, իսկ շուրջ 60%-ը՝ տնտեսական իրավիճակից: Այս պատկերն է արձանագրում ԱՄՆ ՄՁԳ-ի (Ամերիկայի Միացեալ Նահանգների Միջազգային գարգացման գործակալութիւն) օժանդակութեամբ եւ «Կասալս Էնտ Ատշի-էյթս» ընկերութեան կողմից «Հակախոտակցիտն գործողութեան մոբիլիզացիան ծրագրի» շրջանակում իրականացուած հետազոտութիւնը: Զբաւարարուածների թիւը 2008-2010 թուականներին ընթացքում զգալիօրէն աւելացել է: Ըստ հետազոտութեան արդիւնքների, տնտեսական իրավիճակի ընկալումը 2008թ. շատ վատ է գնահատուել 17% հարցուածների կողմից, իսկ նախորդ տարի այն հասել է 35%-ի: Երկրի ընդհանուր իրավիճակով չբաւարարուածների բաժինը 2010-ին ամենաբարձր եղել է մայրաքաղաքում, որտեղ բոլորովին կամ մասամբ բաւարարուած չի եղել հարցուածների մօտ 85%-ը, մինչդեռ այլ քաղաքներում ու գիւղերում արձանագրուել է համապատասխանաբար 80% եւ 77%: Չնայած գիւղաբնակների աւելի ցածր կենսամակարդակին, նրանց ակնկալիքներն աւելի քիչ են գնահատուել: Տնտեսական իրավիճակը լաւ կամ շատ լաւ գնահատողների թիւը եւս նուազել է՝ 2009-ի 6%-ի համեմատ նախորդ տարի հասել է 4%-ի: Հարցուածներն ամենակարեւոր հիմնախնդիրների շարքում նշել են գործազրկութիւնը, որն առաջին տեղում է եղել վերջին 3 տարիների ընթացքում: Գնաճը, որպէս Հայաստանում կարեւոր հիմնախնդիր, 2010 թուականին աւելի սուր է ընկալուել: Եթէ 2009-ին

հարցուածների միայն 20%-ն է գնաճը համարել լուրջ հիմնախնդիր, ապա 2010-ին՝ 43%-ը:

2010 թուականի հարցուածների մեծամասնութեան (82%) կարծիքով, Հայաստանի համար լուրջ հիմնախնդիր է կոռուպցիան: Հետազոտութեան արդիւնքների համաձայն, կաշառք պահանջելու հաճախակիութիւնը եւ պահանջուած կաշառքների չափերը գնալով աճում են: Մեր հայրենակիցները յոյսեր չեն փայփայում բացասական այդ երեւոյթը կրճատելու կամ վերացնելու հնարաւորութեան վերաբերեալ: Ուսումնասիրութիւնը պարզել է նաեւ, որ կոռուպցիան աւելի շատ է տարածուած բարձրաստիճան պաշտօնեաների, քան միջին օղակի եւ ցածրաստիճան պաշտօնեաների շրջանում: Առաւել կոռուպացուած հաստատութիւններ են համարուել Գլխաւոր դատախազութիւնը, դատարանները (64%) եւ Կենտրոնական ընտրական յանձնաժողովը (60%): Հարցուածների մօտ կէսը նախագահի աշխատակազմն ու Երեւանի քաղաքապետարանը ընկալել է որպէս կոռուպացուած, իսկ մնացած մասն էլ կամ չի իմացել, կամ էլ հրաժարուել է հարցին պատասխանել: Հետազոտութեան մէջ նշուած է նաեւ, որ Հայաստանում կոռուպցիոն դէպքերի մէջ ներքաշուելու հիմնական պատճառն այն է, որ դա ինդիւրները լուծելու միակ տարբերակն է: Կոռուպցիոն փաստերի վերաբերեալ էլ մեր հայրենակիցներն իրաւասու մարմիններին չեն յայտնու, որովհետեւ չեն հաւատում, որ յայտնելուց յետոյ ինչ-որ քայլեր կը ձեռնարկուեն: Հարցուածների բացարձակ մեծամասնութիւնը նշել է, որ անտեղեակ է կառավարութեան հակակոռուպցիոն նախաձեռնութիւնների մասին:

Չինաստան՝ երկաթ-գծով դառնալ միջանցք:

6. Անվտանգութիւն ապահովող նշանակութիւն՝ կը մեծանայ Հայաստանի եւ Իրանի տրանսպորտային, էներգետիկ, տնտեսական անվտանգութեան մակարդակը, դրանով հանդերձ նաեւ տարածաշրջանի անվտանգութեան մակարդակը: Ադրբեյջանից եւ Թուրքիայից Իրանի կախւածութիւնը նոյնպէս կը նւազի:

7. Կայունութիւն ապահովող՝ ստեղծելով տրանզիտային հաւասարակշռութիւն՝ կը մեծանայ նաեւ տարածաշրջանի կայունութիւնը, քանի որ Թուրքիան եւ Ադրբեյջանը կը հրաժարեն շրջափակման միջոցով Հայաստանին կոտրելու քաղա-

քականութիւնից: Արդիւնքում կարող են ընթանալ դրական գործընթացներ՝ օրինակ աւելի շուտ կապաշրջափակելի թուրք-հայկական սահմանը:

Այսպիսով, երկաթգծի կառուցումը լուրջ տարածաշրջանային նշանակութիւն կունենայ եւ նպատակ է հետապնդում կապելու ասիական երկրները Եւրոպայի հետ՝ հանդիսանալով դեռեւս օրակարգում գտնուող Հիւսիս-Հարաւ տրանսպորտային նախագծի մի օղակը: Այսինքն Հայաստանը շանս կունենայ դառնալու հանգույց՝ իր նշանակութեամբ դառնալով Եւրասիական համագործակցութեան կարեւորութեան բարդորիչներից մէկը:

Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909



SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd, Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave, Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B
--	---	---



A.A.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աճիրաժեղս է

Coverage & Protection should be on the top of your priority list.









Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԱՐԴԻԿ ՉԵՆ ՎԱՏԱՐՈՒՄ ԲԺՈՇԿՆԵՐԻՆ

ԷԼԻՆԱ ԶԻԼԻՆԳԱՐԵԱՆ

Հայաստանում մահուան հիմնական պատճառ են հանդիսանում սրտանոթային հիվանդությունները եւ քաղցկեղը:

Բժշկական կենտրոնների դեկավարների խօսքով՝ այս պահին մի քանի հազար կին կորցրել է բուժուելու յոյսը այն պատճառով, որ շատ ուշ է դիմել բժշկի: Բժշկի չդիմելու պատճառներից հիմնականը Հայաստանում անվատահոս թիւնն է մասնագետների եւ առողջապահութեան ոլորտի հանդէպ:

Միւս կարեւոր պատճառն այն է, որ հիվանդներին վախեցնում են հետազոտութիւնների եւ բուժումների գները, սակայն կլինիկաների տնօրէնները եւ բժիշկներն ասում են, որ հետազոտուելու համար նախատեսուած գումարները այդքան էլ մեծ չեն, եթէ հաշուի առնուի այն, որ դրանք կարող են փրկել հիվանդի կեանքը: Մասնագէտները նաեւ մատնանշում են պոլիկլինիկաներում անվճար հետազոտուելու հնարաւորութիւնը, որից նոյնպէս շատերը խուսափում են օգտուել:

For additional information please call (626) 399-1799

ԻՐԱՆԻ ՔԻՇ ԿՂՋՈՒ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՐԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԼԵՒՈՆ ԱՀԱՐՈՆԵԱՆ

Շաբաթ, Յունուարի 29-ի վաղ առաւօտեան մեկնեցի Երեւան՝ իմ անձնական գործերը համադրելու եւ մի կարեւոր պատւիրարկութեանն ընդունելու համար: Այդ հիւրերը իւրաքայտուկ անձնաւորութիւններ էին: Պատւիրարկութեան մաս էին կազմում իրանի Պարսից ծոցում գտնուող Քիշ կղզու ընդհանուր տնօրէն ճարտարագէտ պրն. Մոհեբին եւ իր տեղակալ՝ ճարտարագէտ պրն. Մասրուրին նաեւ «Քիշ-էյր» աւիացիայի տնօրէն պրն. Բեհազինը, որոնք Երեւան ժամանեցին երկուշաբթի, 31 Յունուարի երեկոյեան: Նախապէս հանդիպումներ էի ծրագրել Հայաստանի ընդհանուր աւիացիայի պետ պրն. Արտյոմ Մովսիսեանի հետ, որը տեղի ունեցաւ ձիւնոտ ու ցուրտ եղանակում: Հակառակ Երեւանից դէպի Ջուարթնոց երթեւեկութեան խճողման դժուարութեանը, առանց ուշացումի հասանք ժամադրավայր: Հանդիպման ընթացքում գրոցը մեծ մասամբ ընթանում էր Երեւան-Քիշ մի նոր թռիչք հաստատելու շուրջ՝ իրանական կամ հայկական օդային ընկերութիւնների միջոցով եւ ի վերջոյ երկու կողմերն էլ համաձայնեցին այդ նոր թռիչքի մասին եւ որոշուեց այդ ուղղութեամբ աշխատանք սկսել պետութիւնից տւեալ իրաւունքն ստանալուց յետոյ: Պրն. Մոհեբին Երեւան գալիս անցել էր VIP կողմից, որը Երեւանի հին օդակայանի շէնքն է, որը յարմարեցրել է այդ նպատակի համար: Նա ասաց, որ շատ է լսել Երեւանի նոր կառուցած օդակայանի վերաբերեալ, եւ ցանկացաւ տեսնել այն: Խնդիրը Հայաստանի պաշտօնեաների կողմից կարգադրու-

եց, եւ երբ իրանական խումբը այդ շքեղ օդակայանը տեսաւ, շատ տպաւորուեց: Այնուհետեւ մի քանի վայրեր, որ իրենց շատ էր հետաքրքրում, այցելեցին նախ՝ Իրանի դեսպանատունը, որտեղ նրանց ջերմօրէն ընդունեց իրանի դեսպան պրն. Սէյէդ Ալի Սադաիանը, իսկ երկրորդ օրը, Փետրուարի 1-ին ցանկութիւն յայտնեցին այցելել իմ միջոցով վերանորոգւած 136-րդ դպրոցն ու Բնապահպանութեան թանգարանը: Պրն. Մոհեբի վրայ մեծ ազդեցութիւն գործեցին եւ դպրոցի աշակերտները եւ հիացմունք պատճառեցին իրենց պարսկերէն լեզուով բանաստեղծութիւնների արտասանութիւններով, որից բարձր ոգեւորութեամբ ներշնչւած՝ նա դիմեց դպրոցի տեսչուհուն՝ տկն. Գրետա Թունեանին եւ ասաց, որ իւրաքանչիւր դասարանի երեք գերազանցիկ աշակերտներին՝ իրենց ուսուցչի հետ, մէկ շաբաթով ուղարկել Թեհրան եւ այնտեղից էլ Քիշ կղզի՝ հիւրընկալուելու համար:

Տողերիս գրողը լուրջ մտածում է այս հարցի իրագործման վերաբերեալ: Երկրորդ այցելավայրն էր Բնապահպանութեան թանգարանը, որը մեծ ուշադրութեան արժանացաւ նրանց կողմից: Այնտեղ էլ պրն. Մոհեբին խոստացաւ որոշ թուով ակուարիումի յատուկ ձկներ նուիրել թանգարանին, որոնք պէտք է յանձնուեն օդակայան, որտեղից եւ պիտի ուղարկեմ Երեւան:

Չորեքշաբթի, Փետրուարի 2-ին նախօրօք պայմանաւորուածութեան համաձայն, մի համահաւաստեղի ունեցաւ ՀՀ էկոնոմիկայի նախարարութիւնում, որը կազմակերպուել էր ՀՀ զարգացման գործակալութեան տնօրէն պրն. Ռոբերտ Յարութիւնեանի միջոցով:



Չնայած, որ եղանակը բաւական անսպասու էր, բայց եւ այնպէս մեծաթիւ գործարարներ իրենց մասնակցութիւնն էին բերել հաւաքին, որը տեւեց երկու ժամ, եւ որի ընթացքում ճարտարագէտ պրն. Մոհեբին հանգամանօրէն բացատրութիւններ տուեց, իսկ նրա տեղակալ պրն. Մասրուրին էկրանի վրայ ցուցադրուող նկարների վերաբերեալ սպառիչ բացատրութիւններ տուեց ներկաներին, որից յետոյ եւ էլ առիթ ունեցաւ արտաշայտելու այն մասին, որ դէմ եմ նրանց, ովքեր այն համոզմունքին են, որ Հայաստան-Քիշ շփումները միակողմանի շահաւէտ շուկայ կը լինի, որից միայն իրանական կողմը կարող է օգուտ քաղել: Ըստ իս՝ հայ արտադրողները, սկսած արուեստագէտներից կամ որոշ ձեռարուեստի արտադրողներից՝ ոսկերչութեան, ադամանդի վաճառքի, նկարների եւ ինչպէս եւ այլ ոլորտներում՝ մինչեւ պահածոների, նոյնիսկ հրուշակեղէնի եւ այլ արտադրանքների գծով կարող են մէկ կամ մի քանի տարբեր ընկերութիւններ կազմելով, եւ 20 տարի բոլոր պետական հարկերից ու տուրքերից զերծ մնալով շահութաբեր

աշխատանք կատարել:

Քիշում օրական 100-ից մինչեւ 116 օդային թռիչք ու վայրէջք է տեղի ունենում: Քիշ կղզու տարեկան դրամական շրջանառութիւնը կազմում է մէկ միլիարդ դոլար: Իրանի համարեա բոլոր քաղաքներից դէպի Քիշ թռիչք կայ: Բացի այդ չուերթներ են իրականացուում արաբական բոլոր երկրներից: Քիշ կղզում կայ նաեւ առեւտրական մեծ համալիր, առեւտրի կենտրոններ: Քիշում կան 48 տարբեր հիւրանոցներ 10,000 մահճակալներով, որ առեւտրի ազատ գօտի լինելու պատճառով գերծ են բոլոր տուրքերից: Քիշում աշխատում են 4 միջազգային բանկեր, եւ պրն. Մոհեբին առաջարկեց հիմնել մի հայկական բանկ եւս:

Իմ անձնական կարծիքն է, որ Հայաստանի գործարարները, եթէ սկսեն աշխատել Քիշում, մի նոր շուկայ կարող են բացել Հայաստանի արտադրանքների համար: Աշխարհի առաջադէմ երկրները, օրինակի համար՝ Մեծն Բրիտանիան, Գերմանիան, Ֆրանսիան, Իսպանիան, Ճապոնիան, Չինաստանը, Հա-

Մար.ը էջ 16

AMERICAN RELIABLE WINDOWS

Beautifully while increasing the value of your home with elegant,

18 months no interest* Financing O.A.C.

ENERGY EFFICIENT WINDOW AND DOORS.

Vinyl, Wood, Fiberglass, Clad or Aluminum Replacement, Retro or New Construction

Our Windows Qualify For Tax Credits

Manufacturers rebates & deep discounts available NOW.
Product, Pricing and Financing to meet any Budget.

888-804-7250
Your Satisfaction is Guaranteed.

Licensed • Certified • Insured CSLB LIC#901591

www.americanreliablewindows.com

\$89 Rebate* toward the price of new Vinyl Windows

Rebate Example:
5 windows = \$445
10 windows = \$890
15 windows = \$1335

Serving Los Angeles, Ventura, Orange, & San Bernardino Counties

ՍԱՐՈՅԵԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԵՒ ԸՆԴՈՒՄԱՐՄԱՆ ԳՐՈՂԸ

ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇԵԱՆ

«Պիտի ուզէի տեսնել աշխարհի մէջ որեւէ ուժ, որ կարենար ոչնչացնել այս ցեղը՝ անկարելորդ մարդոց այս ցեղախումբը, որուն բոլոր պատերազմները մղուած ու կորսուած են, որուն կառուցները քանդուած են, գրականութիւնը չի կարողացուիր, երաժշտութիւնը չ'ունկնդրուիր եւ աղօթքներուն պատասխանող չկայ:

«Հրամմեցէ՛ք, ոչնչացուցէ՛ք Հայաստանը: Տեսէք թէ՛ կրնա՞ք ընել:

«Անապատ դրկեցէ՛ք զիրենք առանց հացի ու ջուրի:

«Այրեցէ՛ք անոնց տուններն ու եկեղեցիները եւ տեսէ՛ք թէ՛ անոնք դարձեալ պիտի չ'ինդա՞ն, երգեն ու աղօթեն:

«Որովհետեւ, երբ անոնցմէ երկուքը աշխարհի որեւէ մէկտեղը իրարու հանդիպին, տեսէ՛ք թէ՛ նոր Հայաստան մը պիտի չ'ստեղծեն:»


Սեղմ տողերու մէջ, խորունկ բովանդակութեամբ, շատ բան ըստան, գծելով Մեծ Եղեռնի անարար պատկերը, միաժամանակ, պատգամելով հայ ժողովուրդին վերապրումի կամքը:

Սարոյեանն է՝ կարճ-կտրուկ ու խորիմաստ իր ոճով:

Պիթիւսէն գաղթած ընտանիքի մը գաւակն է ան, ծնած՝ Ֆրեզնո 1908ին եւ մեռած 1981ին, Ֆրեզնո: Աճիւնէն մաս մը փոխադրուած է Խորհրդային Հայաստան կոմիտասի անուան Պանթէոն:

Մանկա-պատանեկան տարիները ապրած է երկրէն եկած գաղթականներու շրջանակին մէջ, ինչ որ մեծապէս նպաստած է հայուն կարգադրի կազմաւորման եւ ազգային ձգտումներու խորացումին:

Ամերիկեան աշխատանքային տարիները հետ կեանքի պայքարի մէջ նետուած, ինքնակերտումի եւ ինքնագարգացումի շրջանէ մը յետոյ, իր մէջ երեւան եկած է անգուստ գրողը, որ հետզհետէ արտադրած է բազմաթիւ գիրքեր, որոնցմէ մէկով Մ. Նահանգներու եւ ամբողջ աշխարհին յայտարարած է. «My name is Aram»: 1930ին գրել սկսելով հեղինակած է պատմութեան գրքերու տասնեակ մը գիրքեր: Իր ժամանակակից ամերիկացի մեծ գրողներու (Ֆոլքերը, Հեմինկուէյ, Վուլֆ, Էնթոնի Սթայնպէք) հետ հարստացուցած է ամերիկեան գրականութիւնը, Սարոյեանական նոր



ոճով օժտելով զայն: Բացի պատմութեան երկերէն ու վէպերէն, հեղինակած է նաեւ թատրերգութիւններ, որոնք բեմադրուած եւ շարժանկարի վերածուած են, արժանանալով միջազգային մրցանակներու: Այդպիսի գործերէն են «Յանդուգն Պատանին թռչող Սկաւառակին վրայ», «Իմ սիրտը Լեռներում է», «Կեանքիդ ժամանակը», «Քարանձախի Մարդիկ», «Հէյ, ո՞վ կայ հոն», «Մանկանց կոտորածը», «Խաղողի Այգին»:

1950-1960 ապրած է Եւրոպա, մեծ մասամբ Փարիզ, ստեղծագործելով վիպակներու շարք մը՝ «Ինչ որ Միծաղելի բան», «Հայրի՛կ, դու ինչն ես», «Մայրի՛կ կը սիրեմ քեզ», «Տղաներ եւ Աղջիկներ», «Մէկ օր յետ-կէսօրուայ աշխարհին մէջ», «Ահա եկաւ, Ահա՛ Գնաց», «Չմեռնիլ», «Նամակներ թէ՛յբու փողոցէն», «Վարդեր՝ ուր եղեր եմ ես», եւ «Պատահական Հանդիպումներ»: Բարեկամ եղած է Պեռնըրտ Շոյի, Չարլի Չեփլինի, Փիքասոյի, Թ' Էլիոթի, Ճ. Սթայնպէքի, Հեմինկուէյի, Եղիշէ Չարենցի եւ ուրիշներու հետ:

Վերջապէս, Սարոյեանի գործերը բազմաթիւ լեզուներու թարգմանուելով անցած են միջազգային գրականութեան, կարողացելով ու գնահատուելով միլիոնաւոր ընթերցողներու կողմէ:

Շատ ուշագրաւ է որ Սարոյեանի անվիճելի արժէքը գնահատելով, աշխարհի հզորագոյն երկու հակառակորդ պետութիւններ՝ Մ. Նահանգներ եւ պատմութեան անցած Սովիէթ Միութիւն, միաժամանակ Սարոյեանի նկարով հետեւեալ դրոշմաթուղթը հրատարակած են:

ԳԵՂԵՑԻԿ ԽՕՍՔԵՐ

* Աղօթքը պահեստի անիւ մը չէ, որուն կը դիմենք երբ նեղի մնանք, այլ դարձող անիւն է, որ մեզի կ'ուղղէ ճիշդ ճամբով:

* Բարեկամութիւնը գիրքի կը նմանի. գայն այրելը քանի մը վայրկեանի կը կարօտի, բայց գայն գրելը՝ տարիներու:

* Կեանքի մէջ ամէն ինչ ժամանակաւոր է: Եթէ լաւ ընթացքով է, վայելէ՛ գայն, որովհետեւ յաւիտեան այդպէս պիտի չ'մնայ, իսկ եթէ վատ ընթացքով է, հոգ մի՛ ըներ, որովհետեւ ան ալ պիտի անցնի:

* Կոյր մը հարց տուած է Ս. Անթոնիոսին. «Կա՞յ աւելի գէշ բան քան տեսողութեան կորուստը»: Վերջինս պատասխանած է. «Այո, տեսութեան կորուստը»:

* Մտահոգութիւնը վաղուան խնդիրները չ'անհետացնէ, այլ այսօրուան խաղաղութիւնը կ'անհետացնէ:

* Երբ ուրիշներուն համար կ'աղօթես, Աստուած մտիկ կ'ընէ քեզի եւ կ'օրհնէ իրենց: Արդարեւ, երբեմն երբ ապահով եւ ուրախ զգաս, ի մտի ունեցիր, որ թերեւս մէկը աղօթած է քեզի համար:

ՆՈՐ ԳԻՐՔԵՐ

«ԱՄԵՐԻԿԱՅՑ ԳԻՐՔԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ»
«ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ»

Լոյս է տեսել վաստակաւոր կրթական գործիչ, բանասէր եւ բանահաւաք Յովսէփ Նալբանդեանի վերը նշեալ անուանումներով գիրքը, ամփոփուած մէկ հատորի մէջ 249 էջերով, գեղեցիկ եւ ճաշակաւոր կազմով: Գիրքի նախաբանը պատկանում է բանասիրական գիտութիւնների դոկտոր, փրոֆեսոր Սուրէն Դանիէլեանին, որից պարգևում է որ հանրածանօթ բանասէր Յովսէփ Նալբանդեանը տարիների ընթացքում ստուգել է 40,000 վաւերագրեր եւ հաւաքել 950 հեղինակների անուններ, որոնք վերջին 153 տարիների ընթացքում Ամերիկայում հրատարակել են 2200 անուն գիրք: Գնահատանքի արժանի գործ է կատարուածը, որն բացառիկ արժէք է ներկայացնում:

Յովսէփ Նալբանդեանը ինքը գրքերի հեղինակ է: Նրա հեղինակած «Լոյս» հանրագիտակները որոնք հրատարակուել են Երեւանում, բարձր տպագրականութեամբ, լաւագոյն միջոցներն են մատաղ սերնդին ծանօթացնելու մեր մշակութիւն, պատմութեան, անցողիկութեան, եւ մեր արժէքներին: «Հայկա-



կան Բառարաններու համառօտ պատմութիւնը» եզակի մի հրատարակութիւն է հայ իրականութեան մէջ: Գնահատելի աշխատանք է կատարում Յովսէփ Նալբանդեանը, յանուն մեր մշակութի պահպանման եւ տարածման: Արժէքաւոր այս հատորը ունենալու համար դիմել կ'ընտելի հայ գրատներին:

ԵՐԳՉՈՒՅԻ ՇԵՐԸ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀԻԹ ՇՔԵՐԹՈՒՄ ՊԱՏՄԱԿԱՆ ՌԵԿՈՐԴ Է ՍԱՅՄԱՆԵԼ

Փոփ երգչուհի Շերիլին Սարգսեանը դարձել է ամերիկեան հիթ շքերթի պատմութեան մէջ առաջին կատարողը, ով շքերթի առաջին հորիզոնականներն իրեն է ենթարկել վեց տասնամեակ անընդմէջ:

Նորացուած «Billboard Dance/Club Play Songs» շքերթում, որը հրատարակուելու է Յունուարի 20-ին, առաջին տեղն է գրաւում Շերիլնոր «You Haven't Seen the Last of Me» երգը: Այս կատարումը, որը երգչուհին իրականացնում է «Բուռլեսկ» միլզիքլում, Յունուարի 16-ին «Ֆիլմում լաւագոյն

իւրօրինակ երգ» անուանակարգում արժանացել է «Ռսկէ գլոբալ» մրցանակի:

Իմանալով պատմական ռեկորդի մասին՝ Շերը «Billboard»-ին ասել է. «Որտեղից են յայտնուել վեց տասնամեակները, եթէ ես ընդամենը 40 տարեկան եմ»: Իրականում երգչուհին, ում գործունէութիւնը երգարուեստում սկսուել է 1960-ականներին, 2011թ. Մայիսին նշելու է 65-րդ տարեկիցը:

Նշենք, որ առաջին անգամ Շերն ամերիկեան շքերթը զլիսաւորել է 1965թ. Օգոստոսի 14-ին «I Got You Babe» երգով:

ՎԱՐՉՈՒ ՏՈՒՆ

PALM SPRINGS ԱՐՉԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՑՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքմիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Մանրամասների համար հեռաձայնել՝
(818) 246-0125

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450



ԲՈՒՐՈՒՄՆԱԿԵՏ ՌԵՅԱՆԸ

ՋՈՒԼԻԵՏԱ ՍԱՀԱԿԵԱՆ

Ocimum basilicum, բազիլիկ, ռեհան, շահասպրամ, լատինական անուննումը բառացիօրէն թարգմանում է՝ արքաներին արժանի բուրմունք:

Հաշրենիքը՝ Հարաւային Ասիան եւ Հիւսիս-արեւելեան Աֆրիկան է, որտեղ հանդիպում են արեւադարձային գոտու լեռներում: Ռեհանի վայրի խոտաբոյսը հանդիպում է Իրանում, Չինաստանում, Հարաւային Ամերիկայում, Կովկասում, Միջին Ասիայում: Որպէս համեմունքային բոյս՝ յայտնի էր հին յոյներին, արաբներին, տաճիկներին: Հիպոկրատը խորհուրդ է տալիս այն օգտագործել նեարդային հիւանդութիւնների դէպքում: Դիոսկորիդիսը գգուշացրել է, որ բոյսի չարահաման դէպքում կարող է վատանալ տեսողութիւնը եւ, որ այն դժուարամարս է: Միջին դարերում ռեհանը մեծ կիրառութիւն է ունեցել յատկապէս բանջարեղենային թիթուների մէջ: Եւրոպայում բոյսը յայտնուել է 16-րդ դարակէսից, այն սիրուել եւ մշակուել է բազմաթիւ երկրներում, յատկապէս մեծ կիրառում ունի իտալական խոհանոցում:

Ռուսաստանում ռեհանը երեւան է եկել 17-րդ դարի սկզբում: Ռեհանն առաւել յայտնի դարձաւ 2-րդ համաշխարհային պատերազմից յետոյ, քանի որ դադարել էր արեւելեան համեմունքների մուտքը Եւրոպա: Ռեհանը հայերին յայտնի է եղել հնագոյն ժամանակներից: Խորհրդային Միութեան շատ վայրերում մշակուում էր Հայաստանին բնորոշ էնդեմիկ ռեհանի երեւանեան տեսակը, որի տերեւներն ու ցորունները մուգ կապտամանուշակագոյն են, իսկ բուրմունքով նման է պղպեղի եւ թէյի խառնուրդին: Հնուց հայերը, ինչպէս նաեւ հարեւան վրացիները նկատել են, որ ռեհանը մարդկանց պարզեւում է լաւ տրամադրութիւն, առողջութիւն եւ երկարակեցութիւն, իսկ աբխազներն ասում են. «Ով ռեհան է ծամում, նա երկար է ապրում»: Ռեհանը շրթնածաղկաւորների ընտանիքին պատկանող մինչեւ 80 սմ բարձրութեամբ միամեայ խոտաբոյս է: Ծաղկում է Մայիս-Սեպտեմբեր ամիսներին: Պտուղը բաղկացած է 4 մուգ շագանակագոյն կամ սեւ փոքր ընկուզանման սերմերից: Սերմերը պահպանում են իրենց պիտանիութիւնը՝ ցանքի համար 4-5 տարի: Սերմերի աճման համար հողի ջերմութիւնը պէտք է լինի 10 աստիճան C-ից բարձր: Սերմը ծլում է 10-14 օրում, օդի 20-25 ջերմաստիճանի դէպքում: Բոյսը խոնավասէր է. չի դիմանում ցրտահարմանը:

Ռեհանի տերեւները պարունակում են մինչեւ 1-1,5 տոկոս եթերային իւղ (ցորուններում՝ 0,02 տոկոս), դաբաղանիւթ (6 տոկոս), գլիկոզիդ, սապոնին, հանքային նիւթեր, ասկորբին աթթու, շաքարներ, բջջանիւթ, սպիտակուց: 100 գրամ հումքի մէջ պարունակուում է 3-9 մգ ենթավիտամին A եւ 150 մգ ուտտին: Եթերային իւղը հիմնականում ծաղկաբոյսերում է, այն պարունակում է էվենգոլ (70%), որը կարող է փոխարինել մեխակի իւղին եւ օգտագործուում է վանիլին ստանալու համար: Էվենգոլը հակաօքսիդանտ է, իջեցնում է «վատ» խոլեստերինի մակարդակը արեան մէջ: Եթերային իւղից ստանում են նաեւ կամֆորա եւ այլ արժէքաւոր նիւթեր, որոնք լայնօրէն օգտագործուում են բժշկութեան, նաեւ սննդի, օձանելիքի եւ

գեղարարական արդիւնաբերութեան մէջ: Ռեհանի սերմը պարունակում է 10-12% ճարպաիւղ:

Ռեհանը մեղրատու բոյս է (մինչեւ 100 կգ՝ 1 հա-ից): Ռեհանի պատրաստուկները լայնօրէն կիրառում են ժողովրդական բժշկութեան մէջ ասթենիայի եւ կենտրոնական նեարդային համակարգի խանգարումների դէպքում: Օգտակար են մարսողութեան համար, լաւացնում են ախորժակը, բուժում ստամոքսի խանգարումը, սրտխառնուքը, մետեորիզմը, որի պատճառով կիրառում են քրոնիկ ստամոքսաբորբի եւ կոլիտի դէպքում: Թեթեւացնում է վիճակը միզապարկի, միզուղիների հիւանդութիւնների դէպքում: Ռեհանը կանխում է բորբոքումների զարգացումը, այդ թւում՝ նաեւ բրոնխիտի:

Բերանի խոտոչի բուժման դէպքում ռեհանը հրաշալիօրէն փոխարինում է եղեսպակին (չալֆէյ), գլխաւորը, որ այն պարտադիր չէ եփել, այլ ուղղակի կարելի է օգտագործել աննդի մէջ: Թերջոցների ձեւով խոտաբոյսի եփուկը բուժում է դժուար ապաքինուող վէրքեր եւ էկզեմա: Տերեւների թարմ հիւթը հանգստացնում է ստամոքսաւր: Ռե-

հանը օգտագործելիս կարելի է իմանալ, որ այն պէտք է սահմանափակել սրտանօթային հիւանդութիւնների, թրոմբոֆլեբիտի եւ հղիութեան դէպքում:

Օշարակ ռեհանից «հմմա» Մանրացրած թարմ ռեհանը լուացէք, աւելացրէք 1:5 յարաբերութեամբ գոտած ջուր, եփէք մինչեւ եռալը: Քամէք: Ստացուած թուրմի 500 մլ-ին աւելացրէք 1կգ շաքար եւ եռացրէք 10 րոպէ, եւման ընթացքում աւելացրէք 3թ/գ կիտրոնի աղ եւ 15 րոպէից վերջէք կրակի վրայից: Լցրէք ապակի տարայի մէջ եւ գմուսէք: Նոյն եղանակով կարելի է պատրաստել օշարակ դաղձից, կիտրոնից, թարխունից եւ այլ կանաչիներից:

Լիմոնադ «Շահասպրամ» 3 կաթիլ ռեհանի հիւթը խառնէք 1ճ/գ կիտրոնի հիւթի հետ եւ լցրէք 20 մլ հանքային ջրի մէջ, աւելացրէք շաքար ըստ ճաշակի: Մատուցէք սառը վիճակում:

Ռեհանի թուրմի պատրաստման եղանակը - 1ճ/գ չոր ռեհանի խոտը թրմէք 8 ժամ 250 մլ եռջրի մէջ՝ ջերմապահում, քամէք: Խմէք 60-70 մլ՝ սնունդ ընդունելուց առաջ, օրը 4 անգամ, քրոնիկ ստամոքսաբորբի դէպքում:

Բուժման ժամկէտը՝ 8 օր, ընդմիջէք 2 շաբաթ եւ կրկնէք: Գ 1ճ/գ ռեհանի թարմ տերեւները թրմէք 500 մլ եռջրի մէջ, փակ վիճակում, 20 րոպէ: Խմէք օրը 3 անգամ 50-ական մլ՝ հիպերտոնիայի դէպքում:

Ռեհանի իւղ Ապակի տարայի մէջ տեղաւորէք թարմ տերեւները (առանց սեղմելու): Աւելացրէք չգոտած արեւածաղկի իւղ, այնքան, որպէսզի տերեւները ծածկուեն: Ծածկէք կափարիչով, 1 ամիս պահէք մութ տեղում, քամէք թանգիֆի օգնութեամբ, մզէք տերեւները: Իւղը պահէք մուգ ապակի տարայի մէջ: Մերսէք մաշկը եւ եղունգները: Գ 1ճ/գ իւղը լուծէք տաք կաթի մէջ եւ աւելացրէք լոգանքի ջրի մէջ: Լոգանքի տեւողութիւնը՝ 10-15 րոպէ:

Օգտակար խորհուրդներ - Մրսածութեան դէպքում շնչէք ռեհանի չոր տերեւները: - Սրտխառնոցի դէպքում ծամէք ռեհանի տերեւը: - Ռեհանի թուրմով լուացէք եւ թրջոցներ դրէք յոգնած աչքերին: - Թուրմով կատարէք ողողումներ բկաբորբի ժամանակ: - Միջատների խայթոցներից պաշտպանուելու համար մաշկին քսէք ռեհանի տերեւների հիւթը:

THE CITY OF GLENDALE
10th Annual Commemorative Events

MAN'S INHUMANITY TO MAN
Special GTV6 program highlighting the last ten years of Man's Inhumanity to Man events.
Will air on April 18 through May 9

ARMENIAN GENOCIDE EVENT
Monday, April 25, 2011 | 6:30 p.m. (doors will open at 5:30 p.m.)
Performances by: Armenian Dramatic Arts Alliance and the Glendale Philharmonic Orchestra under the baton of Maestro Mikael Avetisyan, joined by Glendale Youth Orchestra and International School of Music Choir.
Keynote speaker: Steve Kurkjian
Complimentary tickets will be available on April 11 at the Alex Theatre box office.
Alex Theatre, 216 North Brand Blvd., Glendale, CA (FREE parking at Orange St. Garage.)

ADDITIONAL EVENTS
BLOOD DRIVE
Sunday, April 17, 2011 | 10:00 a.m. - 4:00 p.m.
K&M Karamanoukian Glendale Youth Center | 211 W. Chestnut St., Glendale, CA
To make appointments or for more information, contact ANC Glendale at (818) 243-3444

TIGRAN MANSOURIAN PRESENTS THE MUSIC OF KOMITAS
Saturday & Sunday, April 16 & 17, 2011 | 4:00 p.m.
Glendale Public Library, 222 E. Harvard St., Glendale, CA (818) 548-3288

ALL EVENTS ARE FREE. For more information, please call (818) 548-4844 or visit www.ci.glendale.ca.us
Request for reasonable accommodations must be received no later than one week prior to the event.

ԹՈՒՐՔԻԱՆ ՅԱՆԴԻՄԱՆԵՐԸ Ե ԱԳՆ-ԻՆ

Արաքս գետից առաջի արդիւնաճանաչումը մտահոգել է նոյնիսկ թուրքերին

«Արարատի մարզում գտնուող Արաքս գետի հունից ներկայումս դադարեցուած է առաջի արդիւնաճանաչումը», - «Առաւօտի» հետ զրոյցում վստահեցնում է ՀՀ նախագահին առընթեր Սեւանի լճի հիմնահարցերի յանձնաժողովի նախագահ Վլադիմիր Մովսիսեանը՝ հերքելով այն տեղեկատուութիւնը, թէ օրեր առաջ՝ գետահովիտ այցից յետոյ, կտրուկ վատացել է ինքնագագացողութիւնը, երբ պարզել է, որ հայ գործարարները անխնայ շահագործում են գետի հողերը որպէս առաջի հանք՝ ահռելի ու անվերականգնելի վնասներ հասցնելով շրջակայ միջավայրին: «Եթէ ես ամէն այցից յետոյ սրտի տազնապով հիւանդանոց տեղափոխուեմ, բա իմ գործերն ո՞վ պէտք է անի: Ես առողջ եմ», - վստահեցրեց պարոն Մովսիսեանը՝ հրաժարուելով ներկայացնել գետահովտում գործարարների գործունէութեան արդիւնքում հասցրած վնասների չափը՝ տեղեկացնելով, թէ առաջիկայում հրապարակային յայտարարութիւն կ'անի: Միայն ասաց, որ վերջին անգամ գետահովիտ այցելել է 2010 թ. Դեկտեմբերին՝ յանձնաժողովի այլ անդամների հետ, տարածքում կատարել ուսումնասիրութիւններ ու ներկայացրել կառավարութեանը: Նրա տեղեկացմամբ, կառավարութիւնն էլ ինդիւրը լուծելու նպատակով որոշում է կայացրել ու 345 մլն դրամ յատկացրել: «2086 մ տարածքի վրայ կառուցուած քների վերականգնման ու ամրապնդման աշխատանքներ են տարւում ու կը շարունակուեն մինչեւ գարնան վարարումները, Մայիսին աշխատանքները կ'աւարտուեն»: Ըստ պարոն Մովսիսեանի, այդքանով չեն աւարտուել վերականգնման աշխատանքները, կառավարութիւնը նախատեսել է եւս 40 մլն դրամ յատկացնել ինդիւրները վերացնելու նպատակով: «Արաքսի գետահովտում բարդ իրավիճակ է ստեղծուել: Գետի երկարութիւնը 100կմ-ից աւելի է, թեքութիւնները շատ

փոքր են, վերեւներից եկած գետաբերուկները կուտակուած են գետի հունով մէկ, առաջացնում խնդիրներ: Առաջարկել ենք կանոնաւոր կերպով գետը մաքրել գետաբերուկներից»:

Բնապահպան կարինէ Դանիէլեանն էլ մեզ հետ զրոյցում ասաց, որ գետի հունի հողերը անխնայ շահագործում են արդէն երեք տարի, ու զարմանալի է, որ շահագործման թոյլտուութիւնը կառավարութիւնն է ասպնդակել: «Օրէնքով նման թոյլտուութիւն անհնար է: Զարմանում եմ, թէ ինչպէս է կառավարութիւնը նման հնարաւորութիւն ընձեռել գործարարներին: Գետից առաջ հանելը արգելուած է, որովհետեւ այն անմիջապէս խախտում է գետի ամբողջ ռեժիմը, սելավատանգ է ու հեղեղների պատճառ կարող է դառնալ: Էլ չեմ խօսում այն բազմաթիւ վտանգներին, ռիսկերի մասին, որ առաջի արդիւնաճանաչում արդիւնքում կարող են առաջանալ: Խախտում է ամբողջ կենսաբազմազանութիւնը»: Կ. Դանիէլեանի խօսքով, գետից առաջի արդիւնաճանաչումը մտահոգում է բոլորին, բացի Հայաստանից: Նրա տեղեկութիւններով, վերջերս նոյնիսկ թուրքերն է մտահոգուել ու Հայաստանի արտաքին գործերի նախարարութեանը նոտա է ուղարկել: «Թէ է այս ինչ էք անում գետի հետ, դուք վնասում էք գետի բնականոն աշխատանքը: Զարմացել եմ մեր հարեւանի նոտայից, որովհետեւ նրանք մտահոգուելու փոխարէն պէտք է ուրախանային, նրանց տարածքներ ենք նուիրաբերում: Ամբողջ ինդիւրն այն է, որ Արաքսը սահմանային գետ է, ու երբ Հայաստանի կողմից քանդում ենք, գետն իր հունը փոխում է, ու արդիւնքում մեր տարածքները գիջում ենք թուրքիային»: ՀՀ ԱԳՆ-ից էլ «Առաւօտին» փոխանցեցին, որ վերջին ամիսներին թուրքիայից յանդիմանութեան նոտա չեն ստացել: Տիկին Դանիէլեանն էլ յաւելեց. «Քանակն արդէն որակ է տուել: Գետահովտում այնպիսի փոփոխութիւններ են տեղի ունեցել, որ այժմ փակել այլեւս հնարաւոր չէ»:

ԱՐՓԻՆԷ ՍԻՄՈՆԵԱՆ

ՉԱ՞ՈՐ...

Ամենայն հայոց օլիգարխ Սամուել Ալեքսանեանն Ուքրաինա անունը լսելիս թերեւս արդէն տրամադրութեան անկում է ապրում: Նա այդպէս էլ չի ուզում հաշտուել այն իրողութեան հետ, որ նշուած երկրի կողմից թողարկուող օդիները կարող են միայն այդ երկրում արտադրուել:

Լճիկ Սամոյլի տարիները մեծ փորձը համոզել է, որ ինքն ուքրաինացիներից պակաս օդի թորող չէ, ու նա ոչ մի կերպ չի ուզում հրաժարուել թորելով-կեղծելու վատ սովորոյթից: Հետաքրքիր է, որ պարբերաբար տուգանուող օլիգարխը յայտարարում է, թէ ինքը երբեք ու ոչ մէկի արտադրանքը չի կեղծել ու չի

կեղծում: Տարօրինակ է սակայն, որ ինքն իրեն գործարար համարող այս պարոնն այդպէս էլ չի ձգտում ճշտել, որ եթէ կեղծիքն իրենից հեռու է, ուրեմն ինքն ինչու է այդքան հաճախակի տուգանուում ու ստացուած շահոյթից մի փոքր էլ ՏՄՊՊՀ-ին բաժին հանում:

Ամէն դէպքում, վերջին օրերին ուքրաինացի գործարարների յայտարարութիւնները կարծէք թէ աւելի կարուկ են դարձել: Նրանք հաւաստիացնում են, թէ այլեւս զգուշացումներով ու բարեկամական յորդորներով ինդիւրն չեն վերաբերուելու, եւ շատ արագ ու վերջնականապէս հարցը չլուծելու դէպքում՝ ամենայն հայոց օլիգարխը լուրջ ինդիւրներ է ունենալու ուքրաինական կողմի հետ:

ԱՊՐԻԼԻ 2-17-Ը ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԱՆՑԿԱՑԻՈՒՄ Ե ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԽՈՇՈՐ ԿԻՆՓԱՌԱՏՕՆՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Այն անցկացւում է արդէն 30-րդ անգամ: Ծրագրում 200 նոր ֆիլմեր են ընդգրկուած, սպասում են նաեւ յետահայեաց ցուցադրութիւններ:

«Ստամպուլեան փառատօնի ընթացքում՝ Ապրիլի 12-ին, կը կայանայ նաեւ հայ-թրքական համատեղ արտադրութեան 5 ֆիլմերի համաշխարհային պերմիերան: Երկու թուրք եւ 3 հայ ռեժիսորներին՝ Դիանա Կարդուսեանի, Արթուր Սուքիասեանի, Գոռ Բաղդասարեանի, Կանայ Օզգենի եւ Գիւլին գիւլ Ալթինթասի ֆիլմերը կը ներկայացուեն մրցոյթից դուրս՝ առանձին ծրագրով», - ասում է հայաստանեան «Ոսկէ ծիրան» կինոփառատօնի գեղարուեստական ղեկավար Սուսաննա Յարութեանեանը:

«Դրանք մրցոյթի մէջ չեն, բայց ինքնին փաստը՝ հայ-թրքական համատեղ ֆիլմերի ստեղծման եւ համագործակցութեան, շատ կարեւոր է», - «Ազատութեան» ռատի-

ոկայանի հետ զրոյցում Երկուշաբթի օրը ասաց «Ոսկէ ծիրան»-ի գեղարուեստական ղեկավարը:

Փառատօնին ներկայացուող այս ֆիլմերը ստեղծուել են հայ-թրքական կինոպլատֆորմի շրջանակներում: Պլատֆորմը հիմնադրուել է «Ոսկէ ծիրան» երեւանեան միջազգային կինոփառատօնի եւ «Անատոլու Քուլթուր» մշակութային հասարակական կազմակերպութեան նախաձեռնութեամբ՝ նպատակ ունենալով համատեղ գործունէութեան համար բարենպաստ պայմաններ ստեղծել:

«Եւ ահա այս նախաձեռնութեան արդիւնքը ներկայացուելու է միջազգային խոշոր փառատօնում, ինչը շատ ոգեւորիչ է», - կարծում է Սուսաննա Յարութեանեանը:

Փառատօնին զուգահեռ նաեւ հայ-թրքական պլատֆորմի աշխատանքային սեմինար կ'անցկացուի, որի ընթացքում, յոյս ունեն նոր համատեղ աշխատանքների հիմքերը դնել:

ԻՐԱՆԻ ՔԻՇ ԿՂՁՈՒ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Շարունակուած է 14-էն

ըստային Կորէան եւ այլնը, ամէն առիթով աշխատում են իրենց երկրի արտադրանքն արտահանել ու վաճառել: Այսօր մենք ակնատես ենք, թէ Դուբայի պեթալիում վաճառուում են համարեա ողջ աշխարհի երկրների արտադրանքները, որոնք կարճ ժամանակում տրամադրուում են գնորդներին:

Իհարկէ Հայաստանը չի կարող մրցակցել այդ երկրների հետ եւ նման կարգի արտադրանք էլ չունի: Բայց Քիշը լաւ առիթ է հայ արուեստագէտի եւ արտադրողի համար, որպէսզի մուտք գործի մի նոր միջազգային շուկայ:

Ես մի քանի ամիս առաջ Քիշի տնտեսական պատկերն ու նրա առաւելութիւնները նկարներով ու նամակի միջոցով ցուցադրել եւ ծանօթացրել եմ Հայաստանի Հանրապետութեան յարգարժան վարչապետ Տիգրան Սարգսեանին:

Ես լաւ յարաբերութիւններ ունենալով Քիշի ղեկավար մարմնի հետ, սրտանց ցանկանում եմ կայանայ այս փոխհամագործակցութիւնը, եւ վստահ եմ, որ այս հարցում Հայաստանը կը շահի եւ այն կը վերածուի գործնական մի շրջանի: Որպէս ապացոյց իմ խօսքերին, օրինակի համար՝ եթէ «Գրանդ Քենդի»-ն օրական 10 տոննա արտադրանք ունի, եւ եթէ ստեղծի մի ուրիշ շուկայ, որ կարողանայ օրական 5 տոննա էլ աւել

վաճառի, այն պէտք է Հայաստանում իր աշխատողների թիւն ու կազմակերպութեան ծաւալը մեծացնի. դա փաստ է, որ «Գրանդ Քենդի»-ն ստեղծում է նոր աշխատանքի միջոցներ եւ դա նոյնպէս վերաբերում է Հայաստանի նկարիչներին, որ բացի վերնխաժից եւ երոպական երկրներ նկարներ վաճառելուց, մի այլ հաստատուած վայր էլ կուենան, ինչպէս նաեւ զբօսաշրջութեան ընկերութիւններ ի համար աշխատանքի մի նոր ասպարէզ կը բացուի, սպա ոսկերչութիւնը աղամանագործութիւնը եւ տանեակ այդ կարգի արուեստների եւ արհեստների համար սպառման նոր հորիզոններ կը բացուեն: Քիշի շուկաները եւ նրա բազմաթիւ վաճառատները ոչնչով չեն զիջում Դուբայի ապրանքներին, քանի որ համարեա նոյն ապրանքները աւելի մատչելի գներով վաճառուում են գնորդներին: Քիշում զբօսաշրջիկները նոյնիսկ Յուժուար ամսին էլ կարող են լողալ ծովում. Քիշ կղզին հետաքրքիր վայր է նաեւ մարզիկ ձկնորսների համար: Փոխարաբերութիւնները կայունացնելու համար Զարգացման հայկական գործակալութեան հետ համաձայնութեան ենք եկել, որպէսզի մի մասնագիտական ուղեւորութիւն կազմակերպուի՝ հայ գործարարներին մօտից ծանօթացնելու Քիշ կղզու պայմաններին, ուսումնասիրելու եւ շօշափելու այնտեղ աշխատելու հնարաւորութիւնները:

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91107

Գրասենյակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով
Յետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506



ԼԵՒՈՆ ԶՈՒԼՖԱԼԱԿԵԱՆ.

«ՆԱԽ՝ ԸՍԲԻՇ, ՅԵՏՈՅ ՄԻԱՅՆ ԶԱԲԱԿ»

ԱՇՈՏ ՀԱԿՈՒԹԱՆ

Յունաստանի շախմատի համալսարանի հասարակական հարաբերությունների մեծահասակների առաջնությունից վերադարձել է տուն: Երեկ «Առաւօտը» գրուցեց գլխավոր մարզիչ, օլիմպիական արտիստ Լեւոն Զուլֆալակյանի հետ:

- Մեկական ոսկի ու արծաթ, երկու պրոնզ եւ թիմային երրորդ տեղ. մասնակցությունից եւ արդիւնքից գոհ էք:

- Մասնակցությունից ընդհանուր առմամբ գոհ եմ: Բոլորն էլ լավ հանդէս եկան: Միայն թէ Սասուն Ղամբարեանից աւելին էի սպասում: Նրա մէջ առաջին անգամ հոգեբանական արգելք նկատեցի, որը նա չկարողացաւ յաղթահարել: Վասն Ձուհարեանին էլ այդ առումով աշխատելու տեղ ունի: Միւսների եւ գոտեմարտերից, եւ արդիւնքներից բաւարարուած եմ:

- Նաեւ Արսէն Զուլֆալակեանից ու Եւրի Պատրիկէեւից:

- Պատկերացրէ՛ք՝ այո: Գիտեմ, որ բոլորն էլ նրանցից մետալ, այն էլ՝ ոսկէ մետալ էին սպասում: Բայց թող զարմանալի չթուայ, Արսէնից գոհ եմ աւելի, քան երբեք: Բացարձեւ, թէ ինչի համար: Նա Եւրոպայից 25-30 օր առաջ ծնկի լուրջ վնասուածք էր ստացել, որի պատճառով մօտ տասն օր, ինչպէս ասում են, հետ էինք բերում, ինչը հիմնականում կարողացել էինք: Աւելին ասեմ. ես անգամ պատրաստ էի նրան փոխարինել վարչամ մասին Բորնեանով, որը նույնպէս լավ ըմբիշ է, բայց, անկեղծ ասեմ, Եւրոպայի այս առաջնությունում Արսէնին լիարժէք փոխարինել չէր կարող:

Արսէնն էլ, որ այդ քաջային կարգում հաւաքականի առաջին համարն է, համոզեց իր պատճառաբանութեամբ: Ափսոս, որ չհասցրեց համեմատաբար լաւագոյն մարզավիճակի հասնել: Այդ վիճակում նա շահեց մեկնարկային գոտեմարտը, երկրորդում վնասեց ուսը: Էլ չեմ խօսում ծնօտին ստացած բացուածքի մասին, որին կարելի էր արդէն երկրորդական նշանակություն տալ: Երրորդ տեղի համար պայքարում, որը դիտել են հեռուստադիտողները, նա շատ մօտ էր պրոնզին, սակայն չբաւականացրեց մէկ վայրկեանը, խանգարեցին մի քանի սանիտարները եւ ընդամէնը ձեռքի պայտանողական մի շարժումը, որ հաստատ կ'անէր, եթէ հենց այդ ուսի վնասուածքը չխանգարէր:

- Արսէնը ձեռք ուղիւն է: Հիմա ինչ ասում էք, ձեռք մէջ աւելի շատ հաջող չի խօսում:

- Մենք հայր ու որդի ենք տանը, բայց՝ ոչ հաւաքականում: Արսէն Զուլֆալակեանը մարզումների ու հաւաքների ժամանակ նույն կարգավիճակում է ինչ հաւաքականի միւս անդամները: Նա միւսների համեմատ ոչ մի առաւելություն չունի՝ թիմակիցների հետ հաւասար կատարում է գլխավոր մարզչի բոլոր հրահանգները: Ու եթէ ոչ աւելի, ապա՝ առնուազն հաւասար չափով: Հաւաքականում բոլորն էլ ինչ համար հաւասար են: Այնպէս որ, ըմբիշ Արսէն Զուլֆալակեանի պայքարելու, կամային որակների դրսեւորման իրողութիւնը հայր եւ որդի յարաբերութեամբ:



իւնների հետ ոչ մի առնչություն չունի, թէեւ դրա համար ուրախ եմ եւ որպէս հայր, եւ որպէս հաւաքականի գլխավոր մարզիչ: Միջազգային մրցումներում՝ դրանք կը լինեն Եւրոպայի, աշխարհի առաջնություններ կամ օլիմպիական խաղեր, ինչիւրեք երկրի հեղինակութիւնն է, այլ ոչ թէ արեւակցական յարաբերությունը:

- Եւրոպայի քառակի արտիստ Եւրի Պատրիկէեւի այս անգամ ուսը պրոնզէ մետալի մասին ի՞նչ կ'ասէք:

- Եւրիի մակարդակի մասին խօսելն իսկ աւելորդ է: Մենք հաւաքականում նրան մօտաւորապէս հաւասար երկրորդը չունենք: Իսկ ինչ վերաբերում է թուրք մրցակցին, միայն նա չէ, որ մակարդակով հաւասար է մեր Եւրոպային: Միջազգային մրցադրոգներում մէկ Եւրոպայ կարող է յաղթել, մէկ թուրքը կամ այլ այլազգի: Ըստ ամենայնի, Եւրոպայի մրցակիցն այս անգամ աւելի լավ էր նախապատրաստուել:

- Եւրի Պատրիկէեւը տարուայ մեծ մասը բնակուում եւ մարզում է Կրասնոդարում: Գիտեմք, որ նրա հետ մշտական կապ պահպանում էք: Հնարաւոր է, որ նա այս անգամ թերացել էր:

- Մէկ ճշտում. նա միայն դրսում չի մարզում: Երբ մենք պլանաւորում ենք, որ նա պիտի մարզու՞մային մրցակիցներով ապահովուած լինի, դա անպայման կազմակերպուում է, իսկ երբ ծրագրած լինում ենք շատուկ պատրաստութիւն, նա լինում է մեր բազայում, մեր հաւաքականի հետ:

- Առաջնութեան հերոսը Ռոման Ամոյեանն էր:

- Ամոյեանը մարզավիճակի գագաթին էր եւ իտէալական հանդէս եկաւ՝ նուաճելով Եւրոպայի արտիստի կոչումը: Ասում են, որ ՖիլԱ-ն նրան ճանաչել է Եւրոպայի առաջնութեան լաւագոյն ըմբիշ: Սպասե՛ք: Մօտ օրերս այդ մասին պաշտօնական յայտարարութիւն է լինելու: Յուսով եմ, որ դա հենց Ռոմանն է լինելու:

- Մեր հաւաքականում նորեկներ եւ երիտասարդներ էլ կային, որոնք լիովին արդարացի մարզիչների սպասելիքները:

- Այո: Եւ դա մեզ ապագայի յոյս է տալիս: Նորեկներից է 84 կգ քաշային 23-ամեայ Արթուր Շահինեանը: Նա երիտասարդներից մեծերի հաւաքական տեղափոխուելուց յետոյ առաջին անգամ լուրջ արդիւնքի հասաւ՝ Գորտմունդում դառնալով Եւրոպայի առաջնութեան պրոնզէ մետալակիր: Երրորդ տեղի համար գոտեմարտում

Ա.Դ.Յ.Կ. «ԿԱՅԾ» ՄԻՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿ

Շարունակուած էջ 1-էն

ներէն Հէրի Իւնել-Յովակիմեան (անգլերէնով) եւ Ռագմիրկ Տէր Դաւիթեան (հայերէնով): Անոնք հակիրճ պատմական ըրին թէ ինչպիսի պայմաններու բերումով Պոլսոյ մէջ 1911 թուականին ծնունդ առաւ «Կայծ» Երիտասարդական Միութիւնը, նպատակ ունենալով հայրենասիրական եւ գաղափարական առողջ դաստիարակութիւն ջամբել մեր նորահաս սերունդին, որ յետագային պիտի դառնար հայ ժողովուրդի ազատագրական պայքարի մղիչ ուժը:

Միեւնոյն շրջանին սկսաւ լոյս տեսնել «Կայծ» գրական, գիտական եւ հասարակական ամսաթերթը, որպէս օրկան Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կ. Պոլսոյ Ուսանողական Միութեան: Արդարեւ «Կայծ»-ի հիմնադիրներն ու խմբագիրները Ե. Ամատունի, Ա. Կիտուր եւ Յ. Գալճեան, իրենց յօդուածներով, լուսաբանած են արեւմտահայութեան վիճակը հայկական յեղափոխական շարժումներն ու առաջադրանքները, ինչպէս նաեւ երիտասարդու-

թեան քաղաքական, գաղափարական եւ տնտեսական պայքարի ուղիները:

Ընթրիքի սպասարկութեանն ետք տեղի ունեցաւ ազգային երգերու խանդավառ եւ չիշատակելի երեկոյ մը: Այս առթիւ յատկապէս Լոնտոնէն ժամանած էր սիրուած երգիչ Սամուէլ Վարդանեան: Ան իւրապատուկ մեկնաբանութեամբ «Ձայն մը Հնչեց էրգրումի Հայոց Լեռներէն» սկսելով ներկաներուն հրամայուց մեր ազատագրական պայքարի ֆէտայական եւ հայրենասիրական երգերը, զանոնք հասցնելով մինչեւ «Հնչակեան ենք մենք, ուխտեալ գինուորներ»-ը: Այդ բոլորէն բխած պատգամն էր «... Ձեն կարող մարել հուրը սրբազան գաղափարին որ կ'ուռճանայ մեր մէջ», նաեւ «Կործանենք բոլոր կարգերն անարդար, որպէսզի կանգնի պայծառ ապագան»:

Մինչեւ առաւօտեան առաջին ժամերը շարունակուող խանդավառ երեկոյի ընթացքին տեղի ունեցան նաեւ սրտաբուխ նուիրատուութիւններ «Կայծ»-ի բարգաւաճման փոնտին:

Գ. Մ.

նա հանդիպեց գերմանացու հետ, որին երկրպագում էր ամբողջ դահլիճը: Մրցավարներն էլ ինչ-որ տեղ փորձեցին «բարի աչքով» նայել մրցադրոգի տիրոջը: Բայց Շահինեանը, դրսեւորեց պայքարելու կամք, նպատակասլացութիւն, յաղթեց ոչ միայն մրցակցին, այլեւ մրցավարներին ու գերմանացի երկրպագուներին ու նուաճեց պրոնզէ մետալ:

Հիմա գանք Արթուր Ալեքսանեանին: Գերմանիայում 96 կգ քաշային կարգում Եւրոպայի փոխարտիստի կոչումը նուաճած գիւմրեցի 20-ամեայ ըմբիշի արածն իսկական հերոսութիւն էր: Անցած տարի նա աշխարհի երիտասարդների արտիստի դարձել էր 84 կգ քաշային կարգում: Նրան ես առաջադրեցի բարձրանալ մէկ աստիճան վեր, որպէսզի աճող օրգանիզմը ստիպուած չլինի շատ կիրճորամներ գցել: Գորտմունդում նա գրեթէ իր սովորական քաշին էր՝

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շարաքաքերթին T: (626) 797-7680 F: (626) 797-6863 massis2@earthlink.net

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկաք գանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ: G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

94 կգ, իսկ մրցակիցները՝ ութից ինը կիրճորամ աւելի: Սլախնքն՝ նաեւ մասսայով ու փորձով էին գերազանցում: Բայց Արթուրը պայքարեց մինչեւ վերջ: Նոյնիսկ եզրափակչում նա չէր համակերպուում պարտութեան հետ ու մինչեւ վերջին վայրկեանը կռիւ էր տալիս: - Արթուր Ալեքսանեանին տեսնում էք Լոնտոնի մրցադրոգում:

- Ինչո՞ւ չէ: Եւ ոչ միայն նրան: Մեր նպատակը եկող օլիմպիական խաղերում հնարաւորին չափ շատ՝ բոլոր եօթ քաշային կարգերում մասնակից ունենան է եւ մետալների համար պայքարելը:

- Բայց այս առաջնութիւնը ցոյց տուց, որ բացթողումներ, այնուամենայնիւ, կան: - Այո: Անթերի աշխատանք չի լինում: Դրանց վրայ պիտի աշխատենք: Դրա համար ֆեդերացիան, օլիմպիական կոմիտէն եւ նախարարութիւնը ոչինչ չեն խնայել ու սրանից յետոյ էլ չեն խնայի:

REQUEST FOR PROPOSALS (RFP #7536) FAMILY ASSET DEVELOPMENT PROGRAM The Housing Authority of the City of Los Angeles and the City of Los Angeles jointly invite proposals from qualified consortiums to implement the Family Asset Development Program as part of the "Family First Plan" (formerly known as the Human Capital Plan). Copy of the RFP may be obtained from HACLA beginning April 4, 2011 via http://www.hacla.org/ps/ or from CDD via http://www.cdd.lacity.org/home bidsrfp.html or send an e-mail to CDD.planning@lacity.org or call (213) 252-5405 or 252-1832. Proposals will be accepted until 5:00 P.M., by May 10, 2011. 4/14, 4/21/11 CNS-2074678# MASSIS WEEKLY

ՃՇՂՈՒՄ ԶԱՅԱՍԱՆ ԶԱՄԱՐԱՅԿԱԿԱՆ ԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՍԻՆ

Մարումակուած էջ 8-էն

հաշուէր թէ քանի հոգի Հայաստանէն եւ Արցախէն Գալիֆորնիա կ'երթան ամէն Նոյեմբերին ՀՀ-ի հեռուստարշաւին մասնակցելու: Կ'երեւակայէ անոնց ծախսերը... Հեռուստամարաթոն կազմակերպելը խրթին գործ է: Կը պահանջէ լուրջ պատրաստութիւն եւ բազմաթիւ անձերու մասնակցութիւն, ներառեալ Հայաստանէն եւ Արցախէն: Այս լրջութեան շնորհիւ է որ կը յաջողի - ըստ երեւոյթին ոմանց վրդովում պատճառներով: Հոս ալ Խիկարի պատմութիւններուն կը նմանի. Եթէ ձախողէր, պիտի ըսուէր թէ պէտք եղած միջոցներն ու լրջութիւնը չեն կիրարկուիր... Անցնինք:

8) Այո՛, հեռուստամարաթոնին, ինչպէս նաեւ մեր ֆոնեթոնին ընթացքին կատարուած խոստումներէն մէկ մասը չի յարգուիր: Նոյնն է պարագան նմանատիպ ոչ-հայկական ձեռնարկներու: Բայց հակառակ ատոր (Ա.Մ.-ի համար՝ ցաւօք) յայտնեմ, որ ստացուած գումարները վերջին հաշուով կամ հաւասար կ'ըլլան խոստացուածին կամ կը գերազանցեն զայն: Ինչո՞ւ: Նախ՝ որովհետեւ ոմանք իրենց խոստացած գումարէն աւելի կը դրկեն, ուրիշներ ալ օրերուն ուղղակի մասնակցելու անկարելիութեան մէջ ըլլալով, իրենց տարեկան նուիրատուութիւնը հաւատարմօրէն կը կատարեն միջոցառումին աւարտէն ետք: Ու տարուէ տարի կ'աւելնայ թիւը ՀՀ-ի նուիրատուներուն: Այս տուեալները եւս ստուգուած են եւ ստուգելի:

9) Մանուկեան կ'ըսէ թէ փաստը (կառավարական շէնքի շարկաբաժինի «փաստ»-էն գատ...) որ ՀՀ-ը քաղաքականացուած է, այն է՝ որ 2009ի հոգաբարձուներու նիստին, Նախագահ Սերժ Սարգսեան անդրադարձած է Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններուն: Հոս եւս իր տեղեկութիւնները անբաւարար են: Ոչ միայն 2009ին, այլ տարեկան մեր բոլոր նիստերու օրակարգը փակելէ ետք, ընդառաջելով մեզի՝ Սփիւռքէն գացողներու, Հայաստանի նախագահը կը ներկայացնէ տիրող վիճակը, կը պատասխանէ մեր հարցումներուն ու կ'արձանագրէ մեր նկատողութիւնները: Սա առիթ մըն է ժողովէն ետք, ուղղակի խօսելու Հայաստանի նախագահին եւ այլ պատասխանատուներու հետ, լսել բացատրութիւններ, ամենայն ազատութեամբ եւ անկեղծութեամբ: Եթէ այս տեսակի երկխօսութիւնները խանգարում կը պատճառեն Ա. Մանուկեանին, այդ իր հարցն է: Անոր ալ լուծումը կայ...

10) Ա. Մանուկեան կը գովաբանէ Millenium ծրագիրը «որ շատ աւելի մտահոգուած է հայ քաղա-

քացիներու իրաւունքներով քան հայկական բարեգործական կազմակերպութիւնները»: Իրա՞ւ: Millenium-ը Ամերիկայի կառավարութեան պատկանող հիմնարկ մըն է որ ունի յստակ նախապայմաններ որեւէ երկրի մը օգնութիւն հասցնելու համար: Իսկ մեզի համար Հայաստանն ու Արցախը ոչ միայն որեւէ երկիր չեն, այլ հիմնական առանցքն են ՀՀ-ի գործունէութեան, ժողովուրդին ծառայելու միակ նախապայմանով եւ նպատակով:

Արդեօ՞ք Millenium-ը պիտի կառուցէր Հայաստանը Արցախին միացնող մայրուղին, կամ Պարսկաստանի ճամբան, առանց որու 1993-94-ի թրջական եւ ագերիական շրջափակումին պատճառաւ կրնար շնչահեղձ ըլլալ Հայաստանը, կամ կրնար ձեռքէ երթալ Արցախն ու իր ողջ բնակչութիւնը: Կ'երեւի Millenium-ն է նաեւ որ պիտի կառուցէր Արցախի Հիւսիս-Հարաւ մայրուղին: Այս կենսական ծրագիրները, եւ ո'չ մէկը բազմահարիւր այլ ծրագիրներէ, ո'չ Millenium-ը, ո'չ ալ այլ օտար կազմակերպութիւն մը պիտի իրականացնէր, մանաւանդ Արցախի մէջ, պարզապէս որովհետեւ իրենք է որ քաղաքականացուած են եւ ոչ թէ ՀՀ-ը:

11) Ա. Մ. կ'ըսէ թէ ՀՀ-ը աւելի կը «ծառայէ գործող իշխանութիւնները հզորացնելու գործին քան երկրին ընկերա-տնտեսական կարիքները ապահովելու»: Իրա՞ւ: 466 քմ ճամբու շինութիւն, 240 քմ ջրատար, 105 նորդպրոցի կառուցում, 130 դպրոցի նորոգում, աւելի քան 30000 աշակերտի համար դասարանային կահույք, 36 հիւանդանոց եւ բուժկէտ, 24 մարզական կեդրոն, 71 քմ ելեկտրական գիծ, 146 քմ կազամուղ, 410 ընկերային բնակարան, Արցախի պատերազմէն ետք աւելի քան 8000 որբերու՝ նպաստ, հողագործներուն տրամադրուած վառելանիւթ ու սերմ. ուսանողներու եւ հետազոտողներու յատկացուած նիւթական նպաստ, Տաւուշի մարզի գիւղերու զարգացման ծրագիր, եւլն: Եթէ ՀՀ-ի այս բոլոր իրագործումները «ընկերա-տնտեսական կարիքներու» չեն նպաստեր, հապա ի՞նչն է որ կը նպաստէ, խնդրե՛մ:

Ստորագրեալ պատիւն ունի ծառայելու այս հոյակապ կազմակերպութեան որ կը կոչուի Հայաստանի Համահայկական Հիմնադրամ: Վստահ եմ, որ նոյն պատիւը կը զգան նաեւ տասնեակ հարաւոր նուիրատուներ, որոնք ՀՀ-ի ճամբով իրենց մասնակցութիւնը կը բերեն Հայաստանի ու Արցախի կերտումին ու հզորացման: Ա. Մանուկեանները կ'անցնին, ժողովուրդի կառուցածը կը մնայ:

ԱԶԳԱՆՈՒԻՐՈՒՄ ԾՐԱԳԻՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵ

Մարումակուած էջ 8-էն

հի գանազան քաղաքներու մէջ գտնուող նշանաւոր յուշարձանները: Անշուշտ այս «շրջապտոյտ»ը կարելի դարձաւ համացանցի միջոցաւ, գոնաւոր եւ տպաւորիչ նկարներով եւ զեղեցիկ երաժշտութեան ընկերակցութեամբ: «Շրջապտոյտ»ին վերջին հանգրուանը հանդիսացաւ Եգիպտոսը, ուր աշակերտները հանդիպեցան նշանաւոր երգիծանկարիչ Ալեքսանտր Սարուխանին եւ ծանօթացան անոր պատրաստած հայկական ժողովրդական ասացուածքներու երգիծանկարներուն, որոնք ցուցադրուեցան պատասխի վրայ: Շատ ուսանելի եւ գուարճալի էր այս փորձառութիւնը՝ աշակերտներուն համար, որովհետեւ ինքնատիպ երգիծանկարներու միջոցաւ անոնք ծանօթացան հայկական ժողովրդական ասացուածքներու, ինչպէս նաեւ երգիծանկարչութեան արուեստին:

Երրորդ գործունէութեան նպատակն էր՝ բարոյական կարեւոր սկզբունքներ եւ նկարագիրի դրական եւ փափաքելի գիծեր ներկայացնել ներկաներուն, շարժուն նկարներու եւ խօսքերու միջոցաւ: Իւրաքանչիւր սահիկի հետ ներկաներուն առիթ կը տրուէր, որ գտնէին պատասխին վրայ երեւցող հարցերուն պատասխանները: Ներկաները մեծ խանդավառութեամբ մասնակցեցան պատասխանները որոնելու աշխատանքին, փոխանակ կրաւորական կերպով ընկալելու բանախօսի մը խրատները:

Յայտագիրին երկրորդ բաժինը, որ ամբողջութեամբ նուիրուած էր ազգային ինքնութեան գաղափարին, վարեց հայագիտական նիւթերու վաստակաւոր ուսուցչուհի Լորա Գուլումճեանը: Առաջին առիթով, ան հրաւիրեց խումբ մը պատանի դերասաններ, որոնք նախորդ շաբթուան ընթաց-

քին դերեր ստանձնած էին ժազ Յակոբեանի «Կուռնկը Կը Կանչէ» գործի ներկայացման մէջ, (պատրաստուած եւ ներկայացուած ՀԲԼՄի վաչէ եւ Թամար Մանուկեան երկրորդական վարժարանի հայերէնի ընտրովի դասարանին կողմէ), ղեկավարութեամբ Լորա Գուլումճեանի: Աշակերտները խանդավառութեամբ խօսեցան իրենց հետաքրքրական փորձառութեան մասին եւ բոլորին հետ բաժնեցին իրենց միտքերը: Ապա, Գուլումճեան հարց-պատասխանի միջոցաւ ջերմ եւ յստակ կերպով բացատրեց մեր ազգային ինքնութիւնը կազմող երեւոյթները ու աշակերտները մղեց մտածելու այն բոլոր տուեալներուն մասին, որոնք որպէս նոյն ժողովուրդի անդամներ կը միացնեն մեզ այլ ժողովուրդներէ: Ան յառաջիկայ հանդիպումներուն աւելի խոր քննարկումի պիտի ենթարկէ այս տուեալները:

Ազգանուիրումի Մարտ ամսուան հանդիպումը իր լրումին հասաւ խանդավառ մթնոլորտի մէջ: Սակայն, աւելի եւս ամրապնդելու համար օրուան խորհրդածութիւնները աշակերտութեան միտքին մէջ, տեսաերիզով ցուցադրուեցաւ Ուիլյամ Սարոյեանի նկարագարուած «Հայը» գրութիւնը՝ անգլերէն եւ հայերէն լեզուներով ու ներշնչող երաժշտութեամբ:

Աշակերտները բաժնուեցան կրկին տեսնուելու խոստումով, համոզուած, թէ կարելի է հաճելի եւ օգտակար միացնել ու հայագիտական նիւթերը սորովիլ հաճելի միջոցներով: Յաջորդ հերթական հանդիպումը, որ ամբողջութեամբ նուիրուած պիտի ըլլայ Ս. Զատիկի խորհուրդին եւ աւանդութիւններուն, տեղի պիտի ունենայ Շաբաթ, Ապրիլ 9ին, նոյն համալիրին մէջ: (Թղթակցութիւնը՝ ՀԲԼՄի Երուանդ Պապայեան մանկավարժական հիմնարկէն)

Ա. ԵՒ Մ. ՅՈՎԱՏԵՓԵԱՆ ՎԱՐՇԱՐԱՆԻՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԵՆ

Մարումակուած էջ 13-էն

դակութեան կարիքը ունէր իրականացնելու համար իր այս ծրագիրը:

Արմանը իմացած էր վարժարանիս տնօրէնութեան, թէ մանկապարտէզի խաղաղալիցի մէջ կարիքը կար խաղաղալիցի յատուկ տնակի մը նորոգութեան եւ խաղաղալիցի բարեգործման: Առ այդ, ան կառուցած էր փոքրերերուն յատուկ տնակ մը, որ զարկ պիտի տար իրենց երեւակայական խաղին եւ ապահոված էր իր սկստուններուն աջակցութիւնը, որոնցմէ մէկուն՝ Քաթրին Թապաքեանին շնորհիւ կարելի եղած էր խաղաղալիցի պատերէն մէկուն վրայ գծուիլ ու ներկուիլ վարժարանիս անունը՝ Թուշնագիր գիրերով: Արմանը նաեւ ներկած էր խաղաղալիցի բոլոր նստարանները ու կարգ մը պատերն ալ զրատախտակներու վերածած էր ու նաեւ կազմած էր պահեստի յատուկ երկու պահա-

րաններ:

Իբրեւ տնօրէնութիւն ուրախ ենք, որ մեր շրջանաւարտներուն մօտ կայ այդ երախտապարտութեան զգացումը եւ պատկանելիութեան գիտակցութիւնը իրենց սիրելի վարժարանին հանդէպ: Հաճելի է ականատես ըլլալ նման ազնիւ եւ վսեմ աշխատանքի մը, ուր երիտասարդ դարձած մեր նախկին աշակերտները կապ կը պահեն իրենց դպրոցին հետ եւ կ'ուզեն ձեռով մը օգտակար հանդիսանալ իրենց սիրելի վարժարանին, որուն յարկէն ներս ծլարձակած ու ծաղկած են:

Արմանը իրագործելով իրմէ պահանջուած պայմանը, Մարտ ամսուն արժանացաւ Արծիւ շքանշանին: Բարի երթ կը մաղթենք Արմանին եւ կը շնորհաւորենք իրեն եւ իր ծնողքին, վստահ ըլլալով որ այս արարքը պիտի ըլլայ առաջիններէն մէկը, շաբթ մը այլ ձեռնարկներուն, որոնք պիտի իրագործէ իր կեանքին ընթացքին՝ իր գաղութին եւ ազգին նկատմամբ:

ՔԱՁ ՆԱԶԱՐ
ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ

Ամէն Կիրակի երեկոյեան
ժամը 10:00-ից 12:30
Կլէնտէյլի 380-րդ կայանից

ԱՇԽԱՏՈՂ ԿՈՒՂՈՒԻ
Փաստատիմայի մէջ հայկական հաստատութիւն մը կարիքն ունի տնային պայմաններով՝ ՀԻՆ ԳԻՐՔԵՐ ՆՈՐՈԳՈՂԻ մը (վճարումի լաւ պայմաններ):
(626) 354-5924 (Վաեէ)



Gene Masuda for City Council 2011 • 3010 San Pasqual St. • Pasadena, CA 91107
(626) 379-6549 • www.masudaforcouncil.com

Elect Gene Masuda!

Keep Our Neighborhoods Great!

ONE OF PASADENA'S LEADING NEIGHBORHOOD ADVOCATES!

Gene Masuda is one of East Pasadena's most experienced and active neighborhood advocates. He has lived in East Pasadena for 25 years. Married to his wife Joanne, Gene has been very active in protecting our neighborhoods and working to build consensus among neighborhoods for years. He serves as President of one of our District's largest Neighborhood Associations (Eaton Blanche).

As a business owner with a 30 year record of success, Gene will bring a clear, critical vision to our budget issues. Our City must be managed for the benefit of its residents, not City Hall insiders.

TALK IS CHEAP! GENE GETS THE JOB DONE!

Gene Masuda has:

- ✓ Successfully fought to keep the Edison right-of-way from being developed into storage units.
- ✓ Led the effort to combat our District's vandalism, drug trafficking and the crime and the violence associated with it.
- ✓ Organized and led District-wide meetings on traffic and earthquake safety.
- ✓ Organized community outreach for the General Plan update process.
- ✓ Established the Gene Masuda Educational Center at the Boys and Girls Clubs of Pasadena.

MASUDA

FOR CITY COUNCIL

KEEP OUR NEIGHBORHOODS GREAT!

On March 8, Elect Gene Masuda!



ԱՊՐԻԼ 19-ԻՆ ՉԵՐ ՉԱՅՆԸ ՏՈՒԷՔ ՀԱՅԱՍԷՐ ՃԻՆ ՄԱՍՈՒՏԱՅԻՆ

ԱՅՍՊԷՍ ԿԸ ԹԵԼԱԴՐԷ ՆԱԵՒ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՅԱՅՏՆԻ ԴԵՍՔԵՐԷՆ՝ ՔՐԻՍ ՇԱՀԻՆԵԱՆ

ԱՅՍՕՐ ԻՍԿ ՀԵՌԱՉԱՅՆԵՑԷՔ ՃԻՆ ՄԱՍՈՒՏԱՅԻՆ **(626) 379-6549**